

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
2010-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. **ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ**
2. **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**
3. **ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**
4. **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ**
  - 4.1. Կրթություն
  - 4.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդություն
  - 4.3. Առողջապահություն
  - 4.4. Սոցիալական պաշտպանություն, երեխաների իրավունքների պաշտպանություն
5. **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**
6. **ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**
7. **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ**
8. **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**
  - 8.1. Տարածքային կառավարում
  - 8.2. Տեղական ինքնակառավարում
  - 8.3. Քաղաքացիական հասարակություն

## 1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՌ	Ազգային անվտանգության ռազմավարություն
ԱԱՀՀՀ	Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՄԳ	Աղքատության մասնակցային գնահատում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ԵՄ	Եվրամիություն
ԿՁԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ ԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԺԾԾ	Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄԱՄՀ	Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԱԿ ՀՊԾ	ՄԱԿ-ի համաշխարհային պարենի ծրագիր
ՄՁԱՀ	Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄՁԳ	Միջազգային զարգացման գործակալություն
ՄՁՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական
ՄՁԾ	զարգացման ծրագիր
ՄՎ	Մոնիտորինգ և վերլուծություն
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՍԾՏԳ	Սոցիալական ծառայության տեղական գրասենյակ
ՏԱՊ	2010 թվականի տարեկան աշխատանքային պլան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն

## 2.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի (այսուհետ Ծրագիր) 2011 թվականի աշխատանքային պլանի տարեկան հաշվետվությունը կազմվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 11.02.2009թ. թիվ 25-Ա որոշմամբ հաստատված Սյունիքի մարզային զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կողմից:

### **Ծրագրի ընդհանուր բնութագիրը**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N782-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:

ՏԱՊ-ի նպատակներն են.

- 1) Հնարավոր բոլոր ռեսուրսների համախմբումը ՄՁԾ-ով նախատեսվող 2011 թվականին իրականացվելիք միջոցառումների իրականացման համար
- 2) Նախատեսվող միջոցառումների շաղկապումը ՄՁԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ
- 3) Միջոցառումների իրականացման ցուցանիշների և արդյունքների ներառումը տրամաբանական հենքում
- 4) Հնարավորության դեպքում միջոցառումների իրականացման ժամկետների՝ ըստ եռամսյակների և դրանց իրականացման համար պատասխանատու կազմակերպությունների սահմանումը
- 5) Դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունների սահմանումը:

ՏԱՊ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է 2011 թվականի կտրվածքով ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- 1) Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
- 2) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում
- 3) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
- 4) Արդյունաբերության զարգացում
- 5) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
- 6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
- 7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
- 8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
- 9) Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում
- 10) Մարզպետարանի կարողությունների ուժեղացում
- 11) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում

- 12) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում
- 13) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում
- 14) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում
- 15) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

### **Ծրագրի ֆինանսավորումը**

ՄՁԾ իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատված են՝ պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 71.9 մլրդ դրամ, արտարժույթով նախատեսվող ՄՁԾ ֆինանսավորման ծավալները՝ 437.9 մլն ԱՄՆ դոլար և 208.9 մլն եվրո:

2011 թվականի ՏԱՊ-ով նախատեսվել է իրականացնել 18.328 մլրդ դրամի ծրագրեր: Նշված միջոցառումներից 31.12.2011 թվականի դրությամբ իրականացվել են 16.827 մլրդ դրամի ծրագրեր:

2011 թվականի ՏԱՊ իրագործման համար նախատեսված միջոցառումների կատարումն ներկայացված է աղյուսակ 9-ում:

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի կատարման համեմատականը ներկայացված է աղյուսակ 10-ում:

### **Ծրագրի մոնիտորինգի և գնահատման հայեցակարգը**

ՄՁԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է 4 հիմնական բաղադրիչներից.

- 1) Քաղաքականության ուսումնասիրում
- 2) ՄՁԾ ցուցաբիշների և թիրախների վերանայում
- 3) Մասնակցային մոնիտորինգ և գնահատում
- 4) Ազդեցության գնահատում:

### **Ծրագրի հաշվետվության կառուցվածքը**

ՄՁԾ միջանկյալ հաշվետվության ոլորտային բաժինների կառուցվածքը բաղկացած է 4 հիմնական բաժիններից.

- 1) Քաղաքականության վերլուծություն
- 2) Իրականացման առաջընթացը
- 3) Խնդիրները
- 4) Քաղաքացիական դասերը և հետագա քայլերը:

Քաղաքականության վերլուծություն: Այստեղ ամփոփվել են ոլորտի համար տարվա կտրվածքով առաջարկված ցուցանիշները և միջոցառումները:

Իրականացման առաջընթացը: Այս բաժնում նշվել են 2011 թվականի ձեռքբերումները և դրանք կապվել ՏԱՊ-ի արդյունքային ցուցանիշների հետ:

Խնդիրները: Այստեղ նկարագրվել է տարվա ընթացքում ծագած յուրահատուկ խնդիրները և խոչընդոտները:

Քաղաժ դասերը և հետագա քայլերը: Այս բաժինը բացահայտում է հետագա այն խնդիրները, որոնք բյուջեի և պլանավորման գործընթացի հիմքը կհանդիսանան:

### **3.ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

#### **3.1 Քաղաքականության վերլուծություն**

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ ՏԱՊ-ով նախատեսվում է.

- 1) Աջակցություն մարզի ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացմանը
- 2) Ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ մարզի գործարարների շրջանակներում տեղեկատվության տարածման միջոցառումների իրականացում:

Այս նպատակներին հասնելու համար կարևորվում է ՓՄՁ ԶԱԿ-ի Սյունիքի մարզի ներկայացուցչությունների, մարզպետարանի, մարզի խորհրդի, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների անմիջական աջակցությունն ու մասնակցությունը գործընթացին:

Կարևոր է շեշտը դնել հատկապես ՓՄՁ աջակցության տարեկան պլանում գյուղական համայնքների շահառուների տեսակարար կշռի մեծացման վրա:

Առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երին և համայնքների գործարար ներկայացուցիչներին:

#### **3.2 Իրականացման ձեռքբերումները**

Մարզում ՓՄՁ ոլորտում իրականացված աշխատանքներն ըստ աջակցման գործիքների և ՓՄՁ սուբյեկտների կարելի է խմբավորել՝

- 1) ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորության տրամադրման ծրագիր
- 2) Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության ծրագիր
- 3) ՓՄՁ սուբյեկտների թողարկվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների շուկաներ առաջ մղման աջակցության ծրագիր
- 4) ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
- 5) Ուսուցողական աջակցություն

Նշված ուղղություններով կոնկրետ քայլեր են նախատեսվում իրականացնել 2011թ. ընթացքում, մասնավորապես.

- ՀՀ Սյունիքի մարզպետարանի աջակցությամբ և ՓՄՁ ԶԱԿ մարզային կառույցի միջոցով 2011թ. ընթացքում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության

իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, մտավոր սեփականության պաշտպանության, լիցենզավորման, ստանդարտացման, համապատասխանության հավաստման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների ներկայացման ուղղություններով անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն: ՓՄՁ սուբյեկտներին է տրամադրվել նաև հայաստանյան արտահանողների համար 2011թ. կազմված ուղեցույցը:

- 2011թ. ընթացքում 235 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, իսկ 2 ՓՄՁ սուբյեկտի՝ նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցություն:

- 2011 թվականի ընթացքում բավարարվել է վարկային երաշխավորությունների տրամադրման 2 հայտ՝ գումարով 12232.0 հազ դրամ, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության 14 հայտ, սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության 4 հայտ՝ գումարով 8852.8 հազ դրամ, տեղեկատվական և խորհրդատվական աջակցության՝ 235 հայտ և նեղ մասնագիտական աջակցության 2 հայտ՝ գումարով 784.0 հազ դրամ: Ընդհանուր առմամբ բավարարվել է 257 աջակցության հայտ:

- ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի հասանելիությունը ապահովելու նպատակով այդ գործընթացում ներգրավվել են մարզի բոլոր տեղական ինքնակառավարման մարմինները: Մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից մարզի բոլոր տարածաշրջաններում պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ մարզի համայնքային ծառայողների հետ՝ ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրի լուսաբանման վերաբերյալ: 2011թ. ընթացքում մարզի 4 տարածաշրջաններում կազմակերպվել են համայնքների ղեկավարների, աշխատակազմի քարտուղարների և համապատասխան մասնագետների մասնակցությամբ 32 խորհրդակցություններ, սեմինարներ և քննարկումներ:

### **Վարկային ծրագրեր**

2011թ. ընթացքում մարզում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվել են 5432.0 մլն դրամի վարկային ծրագրեր, այդ թվում՝ «SEF» ունիվերսալ վարկային կազմակերպություն՝ 511.0 մլն դրամ, UMCOR, «Արեգակ» վարկային ծրագիր՝ 783.0 մլն դրամ, «Նոր հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ՝ 131.0 մլն դրամ, «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ՝ 632.0 մլն դրամ, «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ՝ 3375.0 մլն դրամ: Նշված վարկային միջոցներն ուղղվել են հիմնականում մարզում գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտների փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը:

2011թ. ընթացքում մարզում ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման նպատակով մասնավոր ներդրողների կողմից իրականացվել են շուրջ 1.3 մլրդ դրամի ներդրումներ:



### **3.3 Խնդիրները**

Մարզում դեռևս ցածր է ՓՄՁ սուբյեկտների տարածաշրջանային ընդգրկվածությունը /ծրագրերում ընդգրկվել են առավելապես Սիսիանի և Կապանի տարածաշրջանի ՓՄՁ սուբյեկտները/:

### **3.4 Քաղած դասերը և հետագա քայլերը**

Գոյություն ունեցող խնդիրների առկայության պարագայում ՄՁԾ ՓՄՁ աջակցման ծրագիրը շարունակում է իրագործվել և այս ուղղությամբ զգալի առաջընթաց է արձանագրվել:

ՓՄՁ աջակցման ծրագրի արդյունավետ շարունակությունը կարևոր նախադրյալ կհանդիսանա մարզում մասնավոր հատվածի զարգացման ռազմավարության մշակման համար:

## 4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

### 4.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

#### 4.1.1 Քաղաքականության վերլուծություն

Հաշվի առնելով մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակը՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը շարունակվում է դիտվել որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: 2011 թվականի ընթացքում ուշադրություն է դարձվել հանրակրթության համակարգում տեղի ունեցող ինտենսիվ բարեփոխումներին, մարզում ավագ դպրոցների համակարգի ընդլայնմանը, նախնական մասնագիտական կրթության արմատավորմանն ուղղված աշխատանքներին:

Նկատի ունենալով Սյունիքի մարզի տնտեսական ներուժն ու զարգացման միտումները առաջնային է դառնում որակյալ մասնագիտական կրթության հնարավորությունների՝ հատկապես նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության հնարավորությունների ընդլայնումը:

Լուրջ աշխատանքներ են իրականացվել հատուկ կրթական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրելու աշխատանքները շարունակելու ուղղությամբ: Հատուկ ընդհանուր կրթության բնագավառում պետական ռազմավարությունն ուղղվել է մի կողմից հատուկ կրթական հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն է տալիս աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները: Այս ուղղությամբ լուրջ քննարկումներ են ընթանում մարզային ենթակայության 2 հատուկ դպրոցների հետագա կարգավիճակի, համակարգում ընդգրկված սովորողների կրթական և սոցիալական կարիքի գնահատմանը համաձայն՝ նրանց ուսուցումը համապատասխան ուսումնական հաստատություններում կազմակերպելու համար:

2011 թվականին շարունակվել է դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսումնական զենքի զետեղարանների կահավորմանն ուղղված աշխատանքները, ուսուցիչների և դաստիարակների մասնագիտական կարողությունների բարձրացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

#### 4.1.2 Իրականացման առաջընթացը

Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում շարունակվել են ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները, մեկ կամ մեկից ավելի թեմատիկ ուղղվածությամբ: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ուսուցիչների առաջին ատեստավորումն իրականացնելու նպատակով նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել առաջնահերթ խնդիրներ ներկայացնող փաստաթղթերի ձևակերպումներն ամբողջականացնելու, տեղեկատվական բազա ձևավորելու ուղղությամբ: Ատեստավորման աշխատանքները

պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու նպատակով կազմվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների ատեստավորվող ուսուցիչների հայտը: Վերապատրաստման դասընթացները անցկացվել են հոկտեմբեր ամսին ընթացքում, որին մասնակցել են մարզի 439 ուսուցիչ: Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներն ու ժամանակացույցը 2011 թվականի ընթացքում կրթության ազգային ինստիտուտի միջոցով ԿԱԻ Կապանի և Գորիսի մասնաճյուղերում իրականացվել են 72 դպրոցի և 52 ՆՈւՀ-երի տնօրենների վերապատրաստման դասընթացներ:

Դեռևս 2010 թվականին՝ «Աջակցություն պետական բյուջեին» Եվրոմիության ծրագրով նախատեսվել էր 122400,0 հազ դրամի շինվերանորոգման աշխատանքներ իրականացնել ՀՀ Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով աշխատանքները հետաձգվել էին: Ծրագրի առաջին փուլի աշխատանքները վերսկսվել են 2011 թվականի մայիս ամսից և դեռևս շարունակվում է:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին մարզի 25 համայնքների ուսուցիչների, աշակերտների և ծնողների համար կազմակերպվել է դասընթացներ՝ առողջ ապրելակերպի և հիվանդությունների կանխարգելման, նույն համայնքների դպրոցների ուսուցիչների համար՝ «Սեռական դաստիարակություն», «Առողջ ապրելակերպ», «Ծնողավարման հմտություններ», «Վարքագծային փոփոխություններ», «Նախապատրաստվածություն աղետներին» թեմաներով: Դասավանդման համագործակցային և մանկավարժական նոր մեթոդների ուսուցումը ներդնելու և կատարելագործելու նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին վերը նշված 25 համայնքների նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների դաստիարակների և ուսուցիչների համար անց են կացվել ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ դասընթացների կազմակերպում: Աշակերտական խորհրդի աշխատանքների ակտիվացման և արդյունավետության բարձրացման նպատակով հիշյալ 25 համայնքների դպրոցների աշակերտական խորհուրդների անդամների հետ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին կազմակերպվել և անց են կացվել դասընթացներ: Վերոնշյալ 3 ծրագրերի ներդրման ֆինանսական արժեքը 2011 թվականի համար կազմել է 3210.7 հազ դրամ: Ծրագրերն իրականացվել են ամբողջովին: Կանաչ ճամբարի կազմակերպում, Գորիսի N 6 դպրոցում ամառային ճամբարի կազմակերպում, բնապահպանական ճամբարի կազմակերպում դպրոցականների համար /1578.5 հազ դրամ/:

Հատուկ կրթության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման առավել նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին մարզի 3 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել է ներառական կրթության արմատավորում, երեխաների ֆիզիկական կարիքի համապատասխան շինարարական (թեքահարթակների, սանհանգույցների համապատասխանեցման) որոշ աշխատանքների իրականացում, ԿԱԻ Գորիսի մասնաճյուղի միջոցով դասընթացների

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

կազմակերպման ապահովում: Իրականացված ծրագրերի ֆինանսական արժեքը 175.5 հազ դրամ:

Նախադպրոցական հաստատությունների կենցաղային պայմանների բարելավման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին 11 նախակրթարաններում տեղադրվել է ջրի ֆիլտրեր /680.0 հազ դրամ/: Ագարակ գյուղի խաղահրապարակում և Սյունիք համայնքի մանկապարտեզում խաղասարքերի տեղադրում /2300.0 հազ դրամ/

Կահույքի և սարքավորումների տրամադրում Կապանի, Մեղրիի և Ագարակի կիրակնօրյա դպրոցներին: Աշխատանքներն իրականացվել են ամբողջովին /500.0 հազ դրամ/:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում բարեկարգման ծրագրերի, շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացման, աշակերտների նախաձեռնությամբ կատարված ծրագրերի, դիտողական պարազանների տրամադրման, համակարգիչների նվիրաբերման ծրագրերի ֆինանսական ներդնումը կազմել է 51641.1 հազ դրամ: Ծրագրերն իրականացվել են ամբողջովին:

**Աղյուսակ 1 Կրթության ոլորտի 2011թ. արդյունքային ցուցանիշները**

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշը	Թիրախ	Փաստացի
Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Սյունիքի մարզում	1. Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում	99.5%	99.5%
	2. Աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը՝ հանրակրթության բնագավառում	7:1	7:1
	3. Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը	34	35
	4. 3-5 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության տեսակարար կշիռը այդ տարիքի երեխաների ընդհանուր թվում	46%	75.61%
	5. Հանրակրթական ծառայությունների որակից աշակերտների և ծնողների բավարարվածության աստիճան	85%	93%
	6. ԲՈՒՀ ընդունված դպրոցի շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների		

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՋՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

	ընդհանուր թվաքանակի մեջ	39%	Շրջանավարտ չի եղել
Դպրոցների մարզադահլիճների և խաղահրապարակների վերանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում	Բարեկարգված մարզադահլիճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը	9.2 %	11.3 %
Ջեռուցման լոկալ համակարգի ներդրում	Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը  Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում սովորող աշակերտների թիվը	30.8%  10681 աշակերտ	31.5%  11023 աշակերտ
Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում)	Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը  Ինտերնետ կապով ապահովված դպրոցների թիվը	102  60	102  75
Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում	Որակավորման բարձրացման, մեկ կամ մեկից ավելի թեմատիկ ուղղվածությամբ վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվ  Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվ	1800  1120	1800  1170
Ուսուցիչների, երեխաների և ծնողների համար դասընթացների կազմակերպում ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը ամրապնդելու նպատակով	Ուսուցիչների, երեխաների և ծնողների համար դասընթացների կազմակերպում /հազ դրամ/	90.99	176.2
Դասավանդման համագործակցային և մանկավարժական նոր մեթոդների ուսուցում	Մարզի 24 համայնքի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների դաստիարակների և ուսուցիչների համար ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ դասընթացների կազմակերպում և անցկացում /հազ դրամ/	785.6	785.6

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԶԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան	Նախապատրաստական աշխատանքների իրականացում ատեստավորման 1-ին փուլի մասնակից ուսուցիչների համար	20%	20%
Աշակերտական խորհուրդների անդամների համար դասընթացների կազմակերպում	Մարզի 24 համայնքների դպրոցների աշակերտական խորհուրդի անդամների հետ դասընթացների կազմակերպում և անցկացում, աջակցություն նույն համակազմին առնվազն 2 ծրագրերի նախաձեռնության համար /հազ դրամ/	4350.0	4350.0
Սոցիալապես անապահով, ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում	Մանկական առողջարարական ճամբարներում ամառային հանգստի կազմակերպում/հազ դրամ/	11920.0	11920.0
Հատուկ կրթության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման նպաստավոր պայմանների ստեղծում, դասընթացների կազմակերպում	Մարզի 2 հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթության զարգացում, թեքահարթակների կառուցում, շինարարական աշխատանքների իրականացում/հազ դրամ/	7223.412	7223.412
Նախադպրոցական հաստատությունների ուսումնանյութական բազայի թարմացում	Մարզի 2 գյուղական համայնքների ՆՈՒՀ-երին կառույցների տրամադրում, գույքի և դիտակտիկ նյութերի ապահովում /հազ դրամ/	3890.5	3890.5
Կիրակնօրյա դպրոցի հիմնադրում և աջակցություն	Կապանի, Մեղրիի և Ագարակի կիրակնօրյա դպրոցներին աջակցություն /հազ դրամ/	3918.0	500.0
Հանրակրթական ուսումնական հաստատություններում բարեկարգման ծրագրերի, շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում,	Դավիթ Բեկի միջնակարգ դպրոցի ջրագծի և միջոցառումների սրահի, Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերանորոգում, Գեղիի միջնակարգ դպրոցի մարզադաշտի բարեկարգում, Կապանի 6 դպրոցներին	18158.2	51641.1

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

աշակերտների նախաձեռնությամբ իրականացված ծրագրեր, դիտողական պարագաների տրամադրում, համակարգիչների նվիրաբերում, դպրոցների աջակցության ծրագրերի իրագործում	համակարգիչների նվիրաբերում, Կապանի դպրոցներին դիտողական պարագաների տրամադրում, Կապանի 8 դպրոցներում աշակերտների նախաձեռնությամբ ծրագրերի իրականացում, Սիսիանի թիվ 2 և թիվ 5 միջնակարգ դպրոցներին աջակցության ծրագրի կատարում/հազ դրամ/			
---	--	--	--	--

**4.1.3 Խնդիրները**

Չնայած ՀՀ կառավարության կողմից ոլորտում իրականացվող բարեփոխումներին և ձեռքբերումներին, ուսման որակ և մատչելիություն ապահովելու համար դեռևս դանդաղ է ընթանում դպրոցի նյութատեխնիկական բազայի արդիականացման և հագեցվածության գործընթացը, մասնավորապես՝ գյուղական դպրոցների լաբորատոր սարքավորումներով, որակյալ ինտերնետ կապով, կոշտ գույքով ապահովվածությունը:

Դպրոցականների ամառային հանգստի լիարժեք և արդյունավետ կազմակերպման համար խիստ նպատակահարմար է օգտագործել մարզի յուրահատուկ բնակլիմայական և ռեկրեացիոն ռեսուրսները՝ շեշտը հիմնականում դնելով վրանային ճամբարների ստեղծմանը:

Հաշվի առնելով ՀՀ Սյունիքի մարզի աշխարհագրական դիրքը և ստրատեգիական նշանակությունը, դպրոցների ուսումնական զենքի զետեղարանների (պահասենյակների) «Ձեռքի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ստեղծելու և կահավորելու գործընթացը վերջնական ավարտին հասցնելու նպատակով մարզի ևս 10 դպրոցների հատկացվել են «Կալաշնիկով» տիպի ինքնաձիգ ուսումնական զենքեր, ԳՊ – 5 տեսակի՝ 4000 և ՊԴՖ տեսակի՝ 1330 հակազագեր:

**4.1.4 Քաղած դասերը և հետագա քայլերը**

Ոլորտի առջև կանգնած խնդիրների լուծումը հրատապ է և պահանջում է լուրջ ֆինանսական միջոցներ:

ԿՏԱԿ-ի կողմից նախատեսվել էր 2011 թվականին մարզի 20-ից ավելի դպրոցների համար ապահովել ինտերնետային կապ, սակայն ինտերնետ կապի ընդլայնման ծրագիրը ֆինանսական միջոցների սղության պատճառով հետաձգվել է: Մարզի ինտերնետ կապով չապահովված հանրակրթական ուսումնական հաստատությունները 2012 թվականի ընթացքում կմիանան համացանցին:

Դպրոցների ուսումնական զենքի զետեղարանների (պահասենյակների) «Ձեռքի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ստեղծելու և կահավորելու գործընթացը գտնվում է ավարտման փուլում: Այն ավարտին հասցնելու համար

պահանջում է ֆինանսական ներդրումներ, որն անհրաժեշտ է իրականացնել բացառապես ՀՀ պետական բյուջեի հաշվին:

Ոլորտում որպես հիմնախնդիրներ են մնում հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման և նյութատեխնիկական բազայի նորացման ու արդիականացման խնդիրները:

Ժամանակն է պետական կրթական առանձին քաղաքականություն իրականացնել գյուղական դպրոցի նկատմամբ, հնարավորություն ստեղծել լուծելու այն կարևորագույն, առաջնահերթ խնդիրները, որոնք տեղերում խոչընդոտում են այդ դպրոցների գործունեության բարելավման գործընթացը: Ժողովրդագրական բացասական միտումների հետ կապված բավականին լուրջ հիմնախնդիր է դարձել մարզի սահմանամերձ, լեռնային սակավաթիվ բնակչությամբ համայնքներում գյուղական դպրոցի պահպանության խնդիրը: Առկա միտումների պահպանման դեպքում առանձին համայնքներ կկանգնեն դպրոցների փակման վտանգի առջև, ինչն իր հերթին զգալի բացասական ազդեցություն կունենա գյուղապահպանության խնդրին:



## 4.2. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

### 4.2.1 Քաղաքականության վերլուծություն

2011 թվականին մշակույթի և սպորտի բնագավառում մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղվել է մարզում պետական մշակութային քաղաքականության իրականացմանը, մշակույթի դերի բարձրացմանը, պետական, ազգային և այլ տոների, ազգային ծեսերի ու ծիսակատարությունների վերականգնմանն ու տարածմանը, մշակութային ժառանգության պահպանությանը, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, կադրային քաղաքականության և մշակութային կրթության զարգացմանը, երիտասարդության հետ տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

2011թ. մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպվել և իրականացվե են ազգային, պետական տոներին նվիրված միջոցառումներ, հորեյաններ, տարելիցներ, փառատոներ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, գիտաժողովներ, համերգային և թատերական ծրագրեր, սպորտային մրցումներ, հուշամրցաշարեր, առաջնություններ:

### 4.2.2 Իրականացման առաջընթացը

ՀՀ անկախության 20-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների շրջանակներում կազմակերպվել և անց են կացվել «Երազ իմ երկիր», «Սյունիք», «Սյունիքի մշակութային օրեր ԼՂՀ-ում» մարզամշակութային փառատոները, «Կինոաշուն, ազգային կինոյի ամիս» միջացառումը, ԱՊՀ կազմավորման և ՀՀ անկախության 20-ամյակների կապակցությամբ «Մենք ապագայի հետ միաձուլվում ենք ռուսերեն լեզվով» խորագիրը կրող ռուսերեն խոսքի օրեր Հայաստանում միջոցառումը: ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ, Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև բարեկամության 20-ամյակին նվիրված, կազմակերպվել և անց են կացվել «Հայ-Իրանական բարեկամության օրեր Մեդրիում» միջոցառումների ծրագիրը, «Եվրոպական ժառանգության օրեր Գորիսում» հանրապետական միջոցառումը:

Երիտասարդության հետ տարվող աշխատանքները ակտիվացնելու նպատակով մարզում կազմակերպվել են «Ռիսանողական ամառ» փառատոնը, «Զանգեզուրյան ձմեռ», «Քաջարանյան ձմեռ» տոնակատարությունները, «Բազե-2011» համահայկական երիտասարդական հավաքը, «Վերջին զանգ», տոնախմբությունը և այլ մարզամշակութային փառատոներ, ցուցահանդեսներ, ուխտագնացություններ ու մրցումներ: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացման, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի մասսայականացման նպատակով 2011թ. մարզում անց են կացվել ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական քաղաքային համայնք», «Լավագույն մարզական բակ» ստուգատեսները, ՀՀ անկախության 20-րդ տարեդարձին նվիրված մարզական փառատոնը, ՀՀ շախմատի

առաջին խմբի 72-րդ մրցաշարը, ՀՀ դպրոցականների շախմատի 6-րդ օլիմպիադայի 2-րդ փուլը, վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահի գավաթի համար մրցաշարի հանրապետական եզրափակիչ փուլը, «ՀՀ ազգային ժողովի գավաթի համար» սպորտային մրցումները, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված մինի ֆուտբոլի մարզային առաջնությունը, Անդրանիկ Մարգարյանի ծննդյան 60-ամյակին նվիրված ֆուտբոլի մարզային մրցաշարը: Մարզի 6 քաղաքային համայնքների շուրջ 80 երիտասարդ մարզիկներ իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել 5-րդ համահայկական խաղերին՝ արժանանալով մեկ արծաթե և երեք բրոնզե մեդալի: Մարզում կազմակերպվել և անց են կացվել միջազգային օլիմպիական օրվան նվիրված սպորտային մրցումներ, առաջնություններ ու հուշամրցաշարեր:

Մարզական և մշակութային միջոցառումները կազմակերպվել են «Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը» ծրագրով մարզպետարանին հատկացված 7171.7 հազ դրամի և ՀՀ կառավարության կողմից որպես դրամաշնորհ տրամադրված 9630.0 հազ դրամի միջոցներով: Միջազգային «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին մարզի մի շարք համայնքներում կազմակերպվել են «Սուրբ Ծննդյան և Սուրբ Զատիկի» տոներին նվիրված միջոցառումներ՝ 4.32 մլն դրամի շրջանակներում:

2011թ. ՀՀ պետական բյուջեով հաստատվել են և իրականացվել են 6 մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերը՝ 243.5 մլն դրամ գումարով, որից՝ Գորիսի Ա. Բակունցի անվան տուն թանգարանի համար 26.1 մլն դրամ, Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի վերանորոգման համար՝ 26.26 մլն դրամ, Կապանի երկրագիտական թանգարանի համար՝ 91.63 մլն դրամ, Մեղրիի մշակույթի տան համար՝ 39.11 մլն դրամ, Գորիսի Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոցի վերանորոգման համար՝ 26.41 մլն դրամ, Խնձորեսկի մշակույթի տան վերանորոգման համար՝ 34.0 մլն դրամ գումարի շրջանակներում:

2011թ. «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի ծրագրով մարզի որոշ համայնքներում հիմնվել են խաղահրապարակներ, մարզադաշտեր, տեղադրել խաղասարքեր, ներդնելով՝ 23,88 մլն դրամ, Ֆրանսիայի «Երկիր և մշակույթ» կազմակերպության կողմից նորոգվել են Եղվարդի Սբ. Աստվածածին և Բարձրավանի Բղենու Նորավանք եկեղեցիները՝ 30.0 մլն դրամի շրջանակներում, Գորիս բարեգործական հիմնադրամի կողմից՝ Սբ. Աստվածածին եկեղեցու վերանորոգման համար՝ 14,5 մլն դրամ:

Աղյուսակ 2 Մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտի 2011թ. արդյունքային ցուցանիշները.

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշը	Թիրախ	Փաստացի
Մշակույթի և մարզական հաստատությունների	Հիմնանորոգվող մշակութային	7	6

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԶԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

շենքերի հիմնանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում	օբյեկտների թիվը Ներդրումների չափը	408.6 մլն դրամ	243.5 մլն դրամ
Մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպում	Մարզային մշակութային միջոցառումների կազմակերպում	11.02 մլն դրամ	16.8 մլն դրամ

**4.2.3 Խնդիրները**

Չնայած իրականացված աշխատանքներին դեռևս շարունակում է հրատապ մնալ մարզի մշակույթի և սպորտի, կրթական հաստատությունների ջեռուցման համակարգերի ներդրման, վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման հարցերը:

Առաջնահերթ խնդիր է հանդիսանում նաև կադրերի վերապատրաստման և վերաորակավորման հարցը:

Աշխատանքներ են տարվել մշակույթի բնագավառի աշխատողների վերապատրաստման և վերաորակավորման ուղղությամբ համապատասխան փաստաթղթեր ներկայացնելով ՀՀ մշակույթի նախարարություն:

**4.2.4 Քաղաժ դասերը և հետագա քայլերը**

Հաշվետու ժամանակահատվածում մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպված մշակութային և սպորտային միջոցառումները էական ազդեցություն են թողել մարզի բնակչության գեղագիտական դաստիարակության, ազատ ժամանցի կազմակերպման, մատաղ սերնդի հոգևոր դաստիարակության վրա:

2011 թվականի ընթացքում կարևորվում է կազմակերպվող միջոցառումներին բնակչության ակտիվ մասնակցությունը, մասսայական մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպումը և հոգևոր մշակութային կրթության ուղղությամբ աշխատանքների ակտիվացումը:

### 4.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

#### 4.3.1 Քաղակականության վերլուծություն

ՄՁԾ-ի առողջապահության ոլորտի գերակա խնդիր է սահմանվել բժշկության արդյունավետության բարձրացումը:

ՄՁԾ-ում առողջապահության բնագավառի արտացոլված գերակայությունները ներառում են՝ արտահիվանդանոցային, հիվանդանոցային և շտաօ բժշկական օգնության որակի բարելավում, մարզի տարածքում նորագույն տեխնոլոգիաների ներդրում, բժշկական հաստատությունների ռեսուրսների բարելավում:

Իրագործելով ՀՀ կառավարության քաղաքականությունը և ծրագրով նախատեսված միջոցառումները ՀՀ Սյունիքի մարզպետարանը ուշադրություն է դարձրել՝ մարզի առողջության առաջնային պահպանման օղակի որակի և մատչելիության բարձրացմանը՝ մարզի բնակչությանը հնարավորինս առավել չափով ընդգրկելով ընտանեկան բժշկության ինստիտուտի գոռծառույթների մեջ, գյուղական և քաղաքային բնակչության համաչափ ընդգրկվածությանը նեղ մասնագիտական արտահիվանդանոցային բուժօգնության մեջ, անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովման գործընթացի որակի և մատչելիության բարձրացմանը, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների որակի և հասանելիության համաչափությանը մարզի ամբողջ բնակչության համար, ինչպես նաև հիվանդանոցային և շտապ օգնության ծառայությունների արդիականացմանն ուղղված աշխատանքներին:

Ամբողջությամբ իրագործելով ՀՀ կառավարության քաղաքականությունը և 2011թ. ծրագրով նախատեսված միջոցառումները՝ հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ Սյունիքի մարզպետարանը ուշադրություն է դարձրել մարզի տարածաշրջաններում գործող առողջապահական կառույցների համաչափ զարգացմանը, բնագավառում ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործմանը, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության, ծննդօգնության որակի ու մատչելիության բարձրացմանը: Մասնավորապես, կարևորվել են՝ ընտանեկան բժշկության զարգացումը, համակարգի ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրմանն ուղղված միջոցառումները, գյուղական բնակչության բուժօգնության բարելավումը, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, բրուցելյոզի, այլ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելումը և ձեռնարկվել են այդ ուղղությամբ մշակված համապատասխան միջոցառումներ՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին:

#### 4.3.2 Իրականացման առաջընթացը

2011 թվականին իրականացվել են.

Արտահիվանդանոցային բուժօգնության գծով.

1. Բարելավվել է ԱԱՊ ոլորտի որակը՝ բարձրացել է ընտանեկան բժիշկների որակյալ ծառայություններից օգտվող, սկրինինգային ծրագրերի մեջ ընդգրկված բնակչության տեսակարար կշիռը, ավելացել է նորածինների կրծքով սնուցման ընդգրկվածությունը, շտկվել են նախկինում տեղ գտած իմունոկանխարգելման գործընթացի բացթողունները, 100% ապահովվել է առողջ երեխայի վարման ծավալը, ապահովվել է ՄՀԻՎ 100%-ով:

2. ԱԱՊ իրականացնող բուժհաստատություններում հաջողությամբ մեկնարկեց Միդաս- 3 ծրագիրը, ինչը նպաստել է ԱԱՊ ոլորտում որակի ցուցանիշների զգալի բարելավմանը, իսկ «Սիսիանի ԲԿ» և «Կապանի ԲԿ» ՓԲԸ արտահիվանդանոցային ծառայությունները արժանացել են ՀՀ առողջապահության նախարարի պատվոգրին՝ այդ բնագավառում հաջողությամբ որակի ցուցանիշների ներդրման համար:

3. Բարձրացել է դիսպանսերային և նեղ մասնագիտական արտահիվանդանոցային բուժօգնության որակն ու մատչելիությունը՝ աճել է ներգատաբանական, ուռուցքաբանական, սրտաբանական հիվանդությունների վաղ հայտանաբերված դեպքերի տեսակարար կշիռը և նրանց ընդգրկումը պետության կողմից երաշխավորված անվճար դիսպանսերային բուժօգնության մեջ, գյուղական ազգաբնակչության մասնագիտական բուժօգնության սպասարկման ընդգրկվածությունը, բարձրացել է հղիների վաղ ընդգրկումը նախաձննդյան հսկողության մեջ:

4. Նվազել է անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովվող ազգաբնակչության շրջանում մերժված դեպքերի թիվը:

5. Բարձրացել է գյուղական համայնքներում արտագնա լաբորատոր-ախտորաշիջ այցելությունների թիվը:

6. Հաջողությամբ ներ է դրվել երեխայի առողջության պետական հավաստագիրը և երեխայի առողջության անձնագիրը:

Հիվանդանոցային բուժօգնության գծով.

1. Իրականացվել է մոր և մանկան առողջության ծառայությունների բարելավում, որի արդյունքում բացառվել է տվյալ ժամանակահատվածում մայրական մահացությունը, վեր են լուծվել պերինատալ մահացության բոլոր դեպքերը, ուսումնասիրվել են պատճառները և ձեռնարկված միջոցառումների արդյունքում 2010թ. համեմատ զգալի նվազել է ինչպես մանկական, այնպես էլ պերինատալ մահացության ցուցանիշները:

2. Հաջողությամբ ներ է դրվել հիվանդանոցային մանկական ծառայության ֆինանսավորման նոր /բոնուսային սկզբունքով/ մեխանիզմը:

3. Բարելավվել են հիվանդանոցային բուժօգնության որակի ցուցանիշները՝ հաջողությամբ ներ է դրվել համավճարի սկզբունքը, ինչը նպաստել է համակարգում ստվերային երևույթների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, նկատվում է մահաբերության ցուցանիշի նվազեցում, պլանային վիրաբուժության ակտիվության բարձրացում, ցածր են կլինիկական և ախտաբանաանատոմիական ախտորոշումների չհամընկման դեպքերը:

Շտապ օգնության ծառայության բարելավման գծով.

1. ՀԲ վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի շտապ բժշկական օգնության ծառայությունն ցուցաբերող բժշկական կենտրոնները հազեցվել են ժամանակակից սանիտարական տրանսպորտային միջոցներով:

2. Իրականացվել է բուժանձնակազմի մասնագիտական կրթում, որը կունենա շարունակական բնույթ:

Բժշկական հաստատությունների ռեսուրսների բարելավման գծով.

1. Շարունակվում է բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավումը՝

ա/ավարտվել են «Կապանի ԲԿ» ՓԲԸ մանկական մասնաշենքերի հիմնանորոգման, գույքով և սարքավորումներով հազեցման աշխատանքները «Հայաստան Համահայկական հիմնադրամի» միջոցներով,

բ/մեկնարկել է ՀԲ վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Մեղրու տարածաշրջանային ԲԿ» ՓԲԸ նոր մասնաշենքի նախագծային աշխատանքները,

գ/ավարտին է մոտենում «ԶՊՄԿ» ՓԲԸ կողմից իրականացվող «Քաջարանի ԲԿ» ՓԲԸ պոլիկլինիկական մասնաշենքերի վերակառուցումը:

2. Շարունակվում է մարզի բուժհաստատությունների կադրային ռեսուրսների բարելավումը՝ ՀԲ կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում «ընտանեկան բժիշկ» մասնագիտացում են ստացել մարզի ԱԱՊ ոլորտում աշխատող 2 բժիշկներ, իսկ նույն ծրագրի շրջանակներում «ընտանեկան և համայնքային բուժքույր» մասնագիտացում 5 բուժքույրեր: Պետական պատվերի շրջանակներում կլինիկական օրդինատորայի միջոցով ՀՀ Սյունիքի մարզի համար 2011թ. մասնագիտացված 4 բժշկներ անցել են աշխատանքի մարզի բուժհաստատություններում:

2011 թվականի ընթացքում բժշկական բարձր որակավորում ունեցող մասնագետներ /ռենտգենոլոգ, գինեկոլոգներ /2/, վիրաբույժ և թերապևտ/ հրավիրվել են ՀՀ Սյունիքի մարզի «Սիսիանի ԲԿ», «Կապանի ԲԿ», «Մեղրու տարածաշրջանային ԲԿ» ՓԲԸ ժամանակավոր աշխատելու համար: Մասնագետների համար ապահովվել են բավարար կենցաղային և արտոնյալ աշխատանքային պայմաններ:

Կազմակերպվել են հանդիպումներ բժշկական համալսարանի ավարտական կուրսերում սովորող ուսանողների հետ:

2011 թվականին կնքվել է եռակողմ պայմանագիր ՀՀ Սյունիքի մարզպետարանի, Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի տեղաբնակ 2 նորավարտ բժիշկների և ՀՀ առողջապահության նախարարության հետ անվճար մասնագիտացման ուսուցում կազմակերպելու վերաբերյալ:

Ներկայումս մարզպետի կողմից տրված միջնորդությամբ և պայմանագիր կնքած 11 նորավարտ բժիշկներ մասնագիտացման դասընթացներ են անցնում ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտում:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի արդիականացված ինտերնետային կայքի «Հայտարարություններ» բաժնում 2011 թվականի սեպտեմբերի 1-ից տեղադրվել է մարզի բժշկական հաստատություններում առկա թափուր պաշտոնների վերաբերյալ տեղեկատվությունը:

2011 թվականին մեկնարկել է շտապ օգնության և մանկական հիվանդանոցային բուժօգնության արդիականացումը՝ ներ են դրվել այդ ծառայությունների ֆինանսավորման նոր մեխանիզմներ, շտապ օգնության ծառայության ավտոպարկը հագեցվել է ժամանակակից տրանսպորտային միջոցներով: Անհետաձգելի հիվանդանոցային բուժօգնության գծով համավճարի ներդրման գործընթացը թույլ է տվել բժշկական կենտրոններին կյանքի կոչել բուժանձնակազմի վարձատրման նոր /բոնուսային/ սկզբունքը, ինչը նպաստել է ստվերային երևույթների և կոռուպցիոն ռիսկերի բացառմանը:

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ է համարվել բուժօգնությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այս նպատակի իրագործման ռազմավարությունը կայացել է նախ՝ բժշկական արդյունավետության բարձր մակարդակի հասնելու մեջ, որը ներառում է առողջության առաջնային պահպանման ծառայությունների բարելավում, արտահիվանդանոցային, հիվանդանոցային մասնագիտական և շտապ բուժօգնության որակի և մատչելիության բարձրացում և՛ առաջնային և երկրորդային մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող հաստատությունների նյութատեխնիկական և կադրային ռեսուրսների բարելավում, ինչպես նաև համակարգի կառավարման բարելավմանն ուղղված բարեփոխումները:

ՀՀ Սյունիքի մարզում գործում են 17 ՓԲԸ, որոնք պետական պատվերի շրջանակներում իրականացնում են արտահիվանդանոցային, հիվանդանոցային և մասնագիտական /նյարդահոգեբուժական/ դիսպասերային բուժօգնություն: Մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների պետական պատվերի գլոբալ բյուջեն կազմել է 1.672 մլրդ դրամ, որից 783.7 մլն դրամ արտահիվանդանոցային, 888.4 մլն դրամ հիվանդանոցային և շտապ օգնության ծառայությունների գծով: 2011 թվականին պետական պատվերի գլոբալ բյուջեի կատարողականը կազմել է 99.8%: Ֆինանսական փոխհատուցումը իրականացվել է 100%:

ՄՁԾ-ի կարևորագույն ռազմավարական նպատակներից են նաև բժշկական հաստատությունների ռեսուրսների բարելավմանն ուղղված միջոցառումները:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով հիմնանորոգվել է և ժամանակակից սարքավորումներով և գույքով հագեցվել է «Կապանի ԲԿ» ՓԲԸ մանկական բաժանմունքի մասնաշենքը: ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից վարկային ծրագրի շրջանակներում մեկնարկե են «Մեղրու տարածաշրջանային ԲԿ» ՓԲԸ նոր մասնաշենքի նախագծային աշխատանքները: Ավարտին են մոտենում 2007 թվականի օպտիմալացման ծրագրով նախատեսված

<<Քաջարանի ԲԿ>> ՓԲԸ պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցման աշխատանքները, որը իրականացնում <<ԶՊՄԿ>> ՓԲԸ-ը:

Իրականացվել են նաև մի շարք կրթական միջոցառումներ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցներով՝

- <<Տուբերկուլոզի դեմ պայքարի>> նպատակային ծրագրի շրջանակներում շարունակվել է ԱԱՊ ոլորտում գործող բժիշկների և բուժքույրերի կրթումը

- ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից <<Շտապ օգնության արդիականացում>> և <<Մանկական հիվանդանոցային բուժօգնության բարելավում>> վարկային ծրագրերի շրջանակներում իրականացվել է նշված օղակներում աշխատող անձնակազմի շարունակական կրթումը:

2011թ. կլինիկական օրդինատուրայի միջոցով իրենց կրթությունն են ավարտել տարբեր մասնագիտությունների գծով 4 բժիշկներ, որոնք աշխատանքային գործունեությունն են ծավալել ՀՀ Սյունիքի մարզի տարբեր բուժհաստատություններում:

Աղյուսակ 3 Առողջապահության ոլորտի արդյունքային ցուցանիշները.

Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի
<b>Ռազմավարական նպատակ 1 Բժշկական արդյունավետություն բարձրացում</b>			
Ծրագիր 1 Արտահիվանդանոցային բ.օգ. որակի բարելավում 1.1 Մարզում առողջության առաջնային պահպանման որակի և մատչելիության բարձրացում՝ ամբողջ մարզի տարածքում ընտանեկան բժշկի ինստիտուտի կայացում	<ul style="list-style-type: none"> <li>Ընտանեկան բժիշկների որակյալ ծառայություններից օգտվող բնակչության տ»սակարար կշիռը</li> </ul>	75-80%	75%
	<ul style="list-style-type: none"> <li>ազգային օրացույցին համապատասխան՝ ըստ տարիքային խմբերի, ազգաբնակչության ընդգրկվածությունը պատվաստումներում</li> </ul>	92-95%	93%
	<ul style="list-style-type: none"> <li>սկրինինգային ծրագրերի՝ /զարկերակային ճնշման չափում, կրծքագեղձի, արգանդի վզիկի, շականակագեղձի/ ազգաբնակչության ընդգրկվածություն ըստ տարիքի</li> </ul>	80-90%	83%
	<ul style="list-style-type: none"> <li>առողջ երեխային վարման ծավալի ապահովում</li> <li>ՄՀԻՎ ապահովում</li> </ul>	100%	100%
		100%	100%



**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՋԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

	<p>ամբուլատոր պայմաններում</p> <ul style="list-style-type: none"> <li>• նորածինների կրծքով սնուցման ընդգրկվածություն</li> <li>• ընտանեկան բժշկի կողմից առողջ ապրելակերպի քարոզչություն</li> </ul>	90%	90%
		100%	100%
1.2 Արտահիվանդանոցային դիսպանսերային և նեղ մասնագիտական բուժօգնության որակի և մատչելիության բարձրացում /Էնդոկրինոլոգիական, ինֆեկցիոն, հոգեբուժական, սրտաբանական, տուբերկուլյոզային, մաշկավեներաբանական, արյունաբանական, մանկաբարձգինեկոլոգիական/ ամբողջովին ընդգրկելով մարզի տարածքի գյուղական և քաղաքային համայնքներում բնակվող ազգաբնակչությանը	<p>ա/էնդոկրինոլոգիական ծառայության գծով՝ կոմատոզ վիճակով հոսպիտալիզացիայի ցուցանիշի նվազում</p> <p>դիաբետով հաշվառված հիվանդների առաջնակի հաշմանդամության մակարդակի իջեցում</p> <p>բ/գյուղումետրիայի կատարման մակարդակի ապահովում</p> <p>գ/ուռուցքաբանական՝ վաղ հայտնաբերված հիվանդների թիվը ընդհանուրի մեջ /գյուղերում և քաղաքներում դիսպանսերային սպասարկման մեջ ընդգրկված ազգաբնակչության հավասար տեսակարար կշիռ</p>	<p>K=0</p> <p>10%</p> <p>100%</p> <p>60%</p> <p>11.65/11,65%</p>	<p>K=0</p> <p>18%</p> <p>100%</p> <p>54%</p> <p>6,5%/16,8%</p>
1.3 Անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովման գործընթացի որակի և մատչելիության բարձրացում	- անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովվող ազգաբնակչության շրջանում մերժված դեպքերի նվազում	0	0
1.4 Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների որակի և մատչելիության բարձրացում մարզի ամբողջ ազգաբնակչության համար	<p>ա/ ախտորոշիչ մասնագետների համատեղելիության գործակիցը դարձնել բ/ գյուղական համայնքներում արտագնա ախտորոշիչ այցելությունների հաճախականության բարձրացում</p>	<p>0</p> <p>2</p>	<p>0</p> <p>2,5</p>
<b>Առաջնահերթ միջոցառումներ</b>	Ծրագրի իրականացման համար կպահանջվի 700.0 մլն դրամ	700 մլն.դրամ	783.7 մլն դրամ

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՋԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

Արտահիվանդանոցային բուժ. օգնության գծով մատուցված ծառայությունների որակի ապահովում			
<p><b>Ծրագիր 2</b>  <b>Հիվանդանոցային բուժօգնության որակի բարելավում</b>                  2.1. մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավում</p>	<p>ա/ պերինատալ մահացության ցուցանիշի նվազում                  բ/ մայրական մահացության բացակայություն                    գ/մանկական հիվանդանոցային բուժօգնության բարեփոխումների ներդրում</p>	<p>10 պր  0</p>	<p>14.8պր  0</p>
2.2 Երկրորդ մակարդակի հիվանդանոցային ծառայության որակի և մատչելիության բարելավում	<p>ա/ հիվանդի բուժման միջին տևողության նվազում /մահճ.-օր/                  բ/պլանային և անհետաձգելի վիրաբուժության համաչափ զարգացում                  գ/ կլինիկական և ախտաբանաանատոմիական ախտորոշումների չհամընկնելու հաճախականության նվազում                  դ/ օնկոլոգիական ախտորոշումով հիվանդների պարբերական բուժման արդյունավետության բարձրացում /5-ամյա ապրելիության ցուցանիշի բարձրացում/</p>	<p>7  50%/50%  0  50%</p>	<p>7,8  43%/57%  0  30%</p>
2.3 շտապ օգնության ծառայությունների բարելավում	<p>ա/ առավելագույն ժամկետը /30 րոպեն /կանչը ստանալուց հետ մինչև սպասարկումը գերազանցող կանչերի թվի բացառում                  բ/ սպասարկված մասնագիտացված կանչերի տեսակարար կշիռի բարձրավում                  գ/ կրկնակի կանչերի տեսակարար կշռի նվազում</p>	<p>0  50%/50%  1%</p>	<p>0  30%/70%  1%</p>

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՋԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

<p><b>Առաջնահերթ միջոցառումներ</b>                  Հիվանդանոցային և շտապ բուժ. օգնության գծով մատուցված ծառայությունների որակի ապահովում</p>	Ծրագրի իրականացման համար կպահանջվի 1.2 մլդ դրամ	1.2 մլրդ դրամ	888.4 մլն դրամ
<p><b>Ռազմավարական նպատակ 2                  Բժշկական հաստատությունների ռեսուրսների բարելավում</b></p>			
<p>Ծրագիր 1                  Բուժ. հաստատությունների շենքային պայմանների բարելավում</p>	<p>ա/“Քաջարանի ԲԿ” պոլիկլինիկական մասնաշենքի հիմնանորոգում</p> <p>գ/“Մեղրու տարածաշրջանային ԲԿ” նոր մասնաշենքի կառուցում</p> <p>դ/“Կապանի ԲԿ” մանկական հիվանդանոցային մասնաշենքի հիմնանորոգում</p>	<p>554.0 մլն դրամ</p> <p>57.750 մլն դրամ</p> <p>363.442 մլն դրամ</p>	<p>554.0 մլն դրամ</p> <p>57.750 մլն դրամ</p> <p>363.442 մլն դրամ</p>
<p><b>Առաջնահերթ միջոցառումներ</b>                  շինարարական աշխատանքների նկատմամբ հսկողություն</p>	Ծրագրի իրականացման համար կպահանջվի 975.2 մլն դրամ		
<p>Ծրագիր 2                  Բուժհաստատությունների լաբորատոր-ախտորոշիչ բաժանմունքների տեխնիկական ռեսուրսների բարելավում</p>	Բժշկական կենտրոնների մանկական բաժանմունքների, շտապ օգնության ծառայության հագեցում ժամանակակից սարքավորումներով		
<p><b>Առաջնահերթ միջոցառումներ</b>                  Բուժ. սարքավորումների ռացիոնալ տեղադրման նկատմամբ հսկողություն</p>	Ծրագրի իրականացման համար կպահանջվի 300.0 մլն դրամ	300.0 մլն. դրամ	241.2 մլն դրամ
<p>Ծրագիր 3                  Բուժհաստատությունների կադրային ռեսուրսների բարելավում</p>	ա/Նեղ մասնագիտակա հետդիպլոմային նպատակային կրթում պետական պատվերի շրջանակներում	ա/ 4 նորավարտ բժշկի աշխատանքով ապահովում մարզում	Ապահովվել է

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

<b>Առաջնահերթ միջոցառումներ</b> Հսկողություն մասնագիտացված բժշկների մարզում աշխատանքի տեղավորման գործընթացում	բ/ԱԱՊ ոլորտի բժիշկների և միջին բուժանձնակազմի շարունակական կրթում <<Տուբերկուլոզի դեմ պայքարի>> ազգային ծրագրի շրջանակներում	բ/շարունակական կրթում	Ընթացքի մեջ է
	գ/ Հիվանդանոցներում աշխատող մանկաբույժների և միջին բուժանձնակազմի կրթում մանկական հիվանդանոցային բուժօգնության բարելավման ծրագրի շրջանակներում	գ/շարունակական կրթում	Ընթացքի մեջ է
	դ/ Շտապ օգնության անձնակազմի վերապատրաստում արդիականացման ծրագրի շրջանակներում:	դ/շարունակական կրթում	Ընթացքի մեջ է
	Իրականացման համար կապահանջվի 50 մլն դրամ	50.0 մլն դրամ	34.22 մլն դրամ

**4.3.3 Խնդիրները**

Բժշկական արդյունավետության բարձրացման կարևոր բաղադրիչներից մեկը դա արտահիվանդանոցային բուժօգնության բարելավումն է: Թիրախային ցուցանիշ՝ ընտանեկան բժշկի ծառայություններից օգտվող բնակչության թիվը կազմել է 75%, սակայն Կապանի ԲԿ ԱԱՊ ոլորտի բժշկների 35% աշխատում են թաղամասային սկզբունքով, այսինք՝ թերապևտներ և մանկաբույժներ են: Ընտանեկան բժշկության ինստիտուտի ամբողջովին ներդրումը մարզում չի իրականացվել առաջին հերթին Կապանի ԲԿ ԱԱՊ ոլորտի բժշկների տարիքային առանձնահատկությամբ /միջին տարիքը՝ 60/ և մասնագիտացման դասընթացների անմատչելիության /վայրը և տևողությունը/ պատճառներով: Լիարժեք չեն կիռարվում պետական պատվերով սահմանված սկրինինգային ծրագրերը:

Դեռևս դժվար է ապահովել նեղ մասնագիտական և դիսպանսերային բուժօգնության մեջ գյուղական և քաղաքային համայնքներում բնակվող բնակչության համաչափ ընդգրկվածությունը:

Անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովման գործընթացի թիրախային ցուցանիշը ապահովվել է, սակայն այս գործընթացի որակը ապահովելու համար անհրաժեշտ է տրամադրվող դեղորայքի ցանկը վերանայել, ընդգրկելով արդի խմբերի դեղորայք:

Հիվանդանոցային բուժօգնության որակի բարելավման առումով անհրաժեշտ է պերինատալ մահացության և հիվանդանոցային մահաբերության ցուցանիշների շարունակական նվազեցում, հասնել պլանային և անհետաձգելի վիրաբուժության համաչափ զարգացման:

Դեռ վերջնական լուծում չի ստացել բժշկական հաստատությունների մի շարք /շտապ օգնության, հակահամաճարակային/ ծառայությունների կադրային հագեցվածության խնդիրը:

#### 4.3.4 Քաղաձ դասերը և հետագա քայլերը

1. “Կապանի ԲԿ” տեղամասային սկզբունքով աշխատող թերապևտների և մանկաբույժների համար “ընտանեկան բժշկություն” մասնագիտացման դասընթացները իրականացնել անհատական ծրագրով առանց հիմնական աշխատանքային գործընթացի ընդհատման:

2. ԱԱՊ բնագավառում իմունոկանխարգելման թիրախային ցուցանիշների ապահովման, ինչպես նաև մանկական հիվանդանոցային ծառայության բարեփոխումների և պերինատալ մահացության ցուցանիշների նվազեցման համար անհրաժեշտ է արդյունքների ուսումնասիրման և վերլուծության համար ապահովել մշտադիտարկման հանձնաժողովի անխափան և մշտական գործունեությունը, ընդգրկելով աշխատանքների մեջ մարզի փորձառու մասնագետներին:

3. Գյուղական բնակչության նեղ մասնագիտական բուժօգնության մատչելիության ապահովման համար անհրաժեշտ է մշակել ֆինանսավորման և մոնիտորինգի նոր մոդելներ՝ այն է ֆինանսավորումը պետք է իրականացվի նեղ մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող բուժհաստատության, իսկ մոնիտորինգը՝ ԱԱՊ տարածքային կենտրոնի միջոցով: Անհրաժեշտ է գյուղական ԱԱՊԿ-ի ֆինանսավորման ծավալները հաշվարկել անհատական, հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

4. Անվճար և արտոնյալ պայմաններում տրամադրվող դեղերի ցանկը ընդլայնելու համար անհրաժեշտ է իրականացնել համագործակցություն այն համայնքների հետ, որոնք բժշկական ծրագրեր իրականացնելու համար նախատեսել են ֆինանսական միջոցներ, ինչը կնպաստի այդ միջոցների նպատակային օգտագործմանը:

5. Պերինատալ մահացության ցուցանիշի նվազեցման համար անհրաժեշտ է ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումների ծրագիր՝ հստակեցնել մարզում 1-ին և 2-րդ մակարդակում ծննդօգնություն իրականացնող հաստատությունների ցանկը և վերջիններիս գործառույթների շրջանակները:

6. Անհրաժեշտ է իրականացնել արդի կադրային քաղաքականություն՝ այն է պետական պատվերի շրջանակներում շտապ օգնության, նեոնատալ, մանկական ծառայությունների գծով իրականացնել նպատակային մասնագիտացում: Մարզի բժշկական կադրային հագեցվածությանն ուղղված միջոցառումները պետք է ունենան շարունակական բնույթ:

#### 4.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

##### 4.4.1 Քաղաքականության վերլուծություն

2011թ. մարզի զարգացման գերակա նպատակներից է սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, այդ կապակցության սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով:

Զբաղվածության ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ քաղաքականության նպատակը գործազուրկների սոցիալական ապահովությունն է: Եթե պասիվ քաղաքականությունն ենթադրում է գործազրկության նպաստների հատկացում, ապա ակտիվ քաղաքականության միջոցով փորձ է կատարվում հավասարակշռել աշխատանքի առաջարկը և պահանջարկը: Շուկայական տնտեսության պայմաններում աշխատաշուկայի քաղաքականությունը սոցիալական քաղաքականության կարևոր մաս է կազմում: Մարզում կապիտալի պակասի և ներդրումների ցածր մակարդակի արդյունք հանդիսացող գործազրկության պայմաններում տարբեր ոլորտների միասնական քաղաքականության իրականացմամբ է պայմանավորված զբաղվածության հիմնախնդիրների լուծման արդյունավետության բարձրացումը և գործազրկության նվազեցումը:

Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է հաշմանդամների վերականգնման և պրոթեզաօրթոպեդիկ օգնության ու ծառայությունների մատուցման կազմակերպման բարելավմանը, որը կնպաստի հասարակության մեջ նրանց ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունեն աշխատելու՝ մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև՝ իրենց ընտանիքի սոցիալական խնդիրները, որն այսօր մեր երկրի սոցիալական քաղաքականության և աղքատության հաղթահարման ծրագրի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. ռազմավարության» պահանջներից է:

Մարզի համար սոցիալական և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը:

Նշված միջոցառումների իրականացման համար ակնկալվում է պետության և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

#### 4.4.2 Իրականացման առաջընթացը

Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումներից որոշակի աշխատանքներ է իրականացվել «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի իրագործման ուղղությամբ:

Ծրագրերի իրականացման համար ՀՀ կառավարությունը մարզին հատկացրել էր 61.1 մլն դրամ: Հաստատվել էր ՀՀ Սյունիքի մարզի պատվիրատուների կողմից «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերով ՀՀ Սյունիքի մարզի համայնքներին հատկացված ֆինանսական միջոցների բաշխման ցանկը և իրականացվող աշխատանքների ժամանակացույցը: Գումարը տրվել էր մարզի 52 համայնքների, որոնք ծրագրերը պետք է իրականացնեին մարտ – հոկտեմբեր ամիսների ընթացքում: Նշված ծրագրերի իրականացման միջոցով հնարավոր կլիներ բարձրացնել զբաղվածության արդյունավետությունը, մեծացնելու գործազուրկների համար աշխատանքի հնարավորությունները, սակայն վերոհիշյալ ծրագրերից իրականացվել է մայն 15 ծրագիր՝ 9.73 մլն դրամ ընդհանուր արժեքով, քանի որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 24 մայիսի 2011թ. N43-Ա/11 հրամանով ուժը կորցրած է ճանաչվել 2011թ. հունվարի 25-ի ՀՀ 2011թ պետական բյուջեի «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծախսային ծրագրերով նախատեսված միջոցների բաշխումն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հաստատելու մասին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N2-Ա/11 հրամանը:

Խոցելի ընտանիքներին աջակցության ոլորտում մարզում շարունակվել է անապահով խավի անվճար սննդապահովման ծրագրի իրականացումը: «Առաքելություն Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ մարզում գործում է 3 բարեգործական ճաշարան, որտեղ 505 հոգի օրական մեկ անգամ ստանում են տաք սնունդ:

Տարեցներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների տրամադրմանը: Վերջին տարիներին այս բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է տարեցների, և հատկապես միայնակ և հաշմանդամ տարեցների կյանքի պայմանների բարելավմանը: Արժվանիկ գյուղում գտնվող տարեցների սպասարկման կենտրոնում խնամվում են 10 շահառուներ:

Հաշմանդամներին հասարակության մեջ ինտեգրման գործընթացը ապահովելու համար մարզային հանձնաժողովի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել հաշմանդամների սոցիալական պաշտպանության վերաբերյալ ծրագրային առաջարկներ 2011թ. տարեկան ծրագրերում ընդգրկելու նպատակով:

2011թ. ընթացքում տեղի է ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Սյունիքի մարզային հանձնաժողովի 6 նիստ, որտեղ քննարկվել են մարզի հաշմանդամների հիմնախնդիրներին վերաբերվող հարցեր:

Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բնագավառը կատարելագործելու նպատակով մարզի 4 սոցիալական ծառայությունների

տարածքային գործակալությունները ստացել են ինտերնետ կապից օգտվելու հնարավորություն:

Սոցիալական ծառայությունների և ծրագրերի վերաբերյալ հասարակության իրազեկման ոլորտում սոցիալական աջակցության բնագավառում ընթացող ծրագրերի և դրանցում ընդգրկվելու չափանիշների վերաբերյալ տարվա ընթացքում հեռարձակվել է 14 հեռուստահաղորդում, որոնք նվիրված են եղել պետական նպաստների, զբաղվածության, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման գործընթացներին:

2011թ. ընթացքում ավանդների փոխհատուցում է տրամադրվել 948 նպաստառու ընտանիքների՝ շուրջ 124.0 մլն դրամ գումարով: Ընթացքի մեջ են ՀԽՍՀ խնայբանկում ներդրված ավանդների փոխհատուցման աշխատանքները:

Մարզի գերակա խնդիրներից մեկը մնում է սոցիալապես անապահով խավի բնակարանային ապահովության խնդիրը: Շարունակվում է «Սոցիալական տուն աջակից պայմաններով» ծրագրի հիմնական՝ «Գորիս-2» փուլը, որը իրականացվում է Շվեյցարական զարգացման և համագործակցության գործակալության և Հայաստանի Հանրապետության կառավարության համաֆինանսավորումով: Այս փուլում լուծում կստանա սոցիալապես անապահով, վագոն տնակներում բնակվող 22 ընտանիքների բնակարանային ապահովության հարցը: Ծրագիրը միաժամանակ նպատակ ունի ուժեղացնելու համայնքային իշխանությունների կարողությունը սոցիալական աշխատանքի բնագավառում:

Ստորև ներկայացվում է իրականացված միջոցառումների արդյունքային ցուցանիշները:

Աղյուսակ 4 Սոցիալական և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի 2011թ. արդյունքային ցուցանիշները.

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տարեկան նախատեսված	Տարեկան փաստացի
1. Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը մարզում	1. Սոցիալական ծառայությունների հասցեականությունից սոցիալապես խոցելի բնակչության բավարարվածության աստիճան	65%	65%
	2. Ծառայության որակից սոցիալապես խոցելի խմբերի	65%	65%



ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տարեկան նախատեսված	Տարեկան փաստացի
	բավարարվածության աստիճան  3. Աշխատանքի տեղավորված գործազուրկներ	500	748
2.Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում,որը կնպաստի խոցելի խմբերի համար մատուցվող ծառայությունների բազմազանությանը			
2.1 Խնամողների վերապատրաստում հաշմանդամների, ծերերի խնամքը, այդ թվում տնային խնամք իրականացնելու համար	Մարզում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը	15	15
2.2 Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում	Հումանիտար ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը	450	505
2.3 Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում	Բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող ծերերի թիվը	11	10

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տարեկան նախատեսված	Տարեկան փաստացի
2.4 Հաշմանդամներին վերականգնողական, պրոտեզաօրթոպետ պարագաներով և տեխնիկական այլ միջոցներով ապահովում	Վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ ստացած հաշմանդամների թիվը	350	400
2.5 Տարբեր սպորտային միջոցառումներ մարզային մաշտաբով և պարաօլիմպիկ խաղերի անցկացում մարզում	Ծառայությունից օգտվող հաշմանդամների թիվը	60	75
2.6 Հաշմանդամների համար շրջակա միջավայրի մատչելիության ապահովումը	Քաղաքային համայնքներում թեք հարթակների կառուցում	15	37
2.7 Հաշմանդամների համար առողջարանների ուղեգրերի ձեռք բերում	Ծառայությունից օգտվող հաշմանդամների թիվը	80	63
2.8 Գործազուրկների համար մասնագիտական վերապատրաստման միջոցառումների կազմակերպում	Մասնագիտական ուսուցումն ավարտածների թվաքանակը, նրանցից աշխատանքի տեղավորվածներ	45 30	164 36
2.9 Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում	Վարձատրվող հասարակական աշխատանքների համայնքային ծրագրերի թիվը և ծրագրերում ընդգրկված շահառուների թիվը	40 900	15 110

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տարեկան նախատեսված	Տարեկան փաստացի
3. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում, ինչի արդյունքում խոցելի բնակչության սոցիալական սպասարկման գործում կավելանան համագործակցությամբ իրականացվող ծրագրերը			
3.1 ՀԿ-ների, ՏԻՄ-եր, ՍԾՏԳ-երի միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակում և ներդրում	ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ սոցիալական ծրագրերի թիվը	10	11
3.2 Մարզի խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների հավաքագրում՝ նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների ընդլայնման և հասցեականության բարձրացման նպատակով	Խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների բազայի առկայություն		Տվյալների բազան պարբերաբար թարմացվում է
3.3 Մարզային երիտասարդական կազմակերպության զարգացում, երիտասարդների շրջանում կամավորական շարժման խթանում	Սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը	50	60
4. Մարզում սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացում, ինչը կնպաստի մարզում սոցիալական ծառայությունների գործունեության հրապարակայնության, նրանց հաշվետվողականության աճին և հետևաբար նաև նրանց աշխատանքի			

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՋԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տարեկան նախատեսված	Տարեկան փաստացի
Նպատակայնության բարձրացմանը			
4.1 Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների /պետական, հասարակական, միջազգային/ և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում և տարածում բնակչության լայն շերտերում	Սոցիալական ծրագրերի և ծառայություն մատուցողների մասին իրազեկված խոցելի բնակչության տեսակարար կշիռ	70%	70%
4.2 Մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի, ՄԾՏԳ-ների կանոնավոր հաշվետվությունների ներկայացում բնակչությանը սոցիալական աջակցության բնագավառում ընթացող ծրագրերի, նրանց մեջ ընդգրկման չափանիշների վերաբերյալ:	Սոցիալական ծրագրերի վերաբերյալ հեռուստատեսությամբ և թերթերի միջոցով տրամադրվող տեղեկատվության թիվը	13	15
5. Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում			
5.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների մասնագետների	Դասընթացներին մասնակցածների թիվը /մարզպետարան և ՄԾՏԳ-ներ, ՏԻՄ, ՀԿ-ներ/	15	15

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՋԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Տարեկան նախատեսված	Տարեկան փաստացի
շարունակական վերապատրաստում հմտությունների զարգացում /դասընթացներ, և այլն/			
6. Երեխաների խնամքի կենտրոնների ստեղծում՝ ապահովելով սոցիալ-հոգեբանական, մանկավարժական և իրավաբանական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երախաներին և նրանց ընտանիքներին			
6.1 Դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում	Մարզում դժվարին իրավիճակում հայտված երեխաների թիվ	1140	1090
6.2 Ժամանակավոր խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում	Խնամքի և սոցիալ-հոգեբանական վերականգնողական աջակցության ծառայություններից օգտված երեխաների թիվը Կապան և Գորիս քաղաքային համայնքներում «Երեխաների ցերեկային խնամքի կենտրոն»-ների ստեղծում	325  120.0 մլն դրամ	414  15.0 մլն դրամ

#### 4.4.3. Խնդիրները

Ներկա պայմաններում անհրաժեշտ է, որպեսզի արտացոլված կարևորագույն հիմնախնդիրները և միջոցառումների իրագործումը ետին պլան չմղվի, կրի շարունակական կատարելագործման բնույթ և հաշվի առնվի նաև տարածքային առանձնահատկությունները:

Մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում պետք է կարևորվի սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների, ինչպես նաև միայնակ տարեցների և հաշմանդամների տնային սպասարկման համակարգի ընդլայնումը:

Երիտասարդների գործազրկությունը լուրջ խնդիր է ՀՀ Սյունիքի մարզում: Իրավիճակն ավելի է բարդանում աշխատանք փնտրող երիտասարդների մասնագիտական ցածր կրթության մակարդակի և հմտությունների մակարդակի բարձրացման, նրանց ցանկության կամ հնարավորության բացակայության բերումով: Տեղեկատվական առկա բազան թույլ չի տալիս մոնիտորինգի ենթարկել ուսուցման համակարգը, աշխատանքի շուկան և նրանց մինչև գոյություն ունեցող կապերը, կանխատեսել աշխատանքի շուկայի կողմից պահանջվող հմտությունները և հետևաբար ուսուցման կարիքները:

Մարզում առաջնահերթ խնդիր է շարունակում մնալ Կապան և Գորիս քաղաքային համայնքներում «Երեխաների ցերեկային խնամքի կենտրոն»-ների ստեղծման հարցը:

#### **4.4.4 Քաղաժ դասերը և հետագա քայլերը**

Մասնագիտական կրթությունը և ուսուցումը ոչ միշտ են զբաղվածության երաշխիք հանդիսանում: Զբաղվածության քաղաքականության այլ միջոցառումներին զուգահեռ, անհրաժեշտ է ուսուցումը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի պահանջներին: Մասնագիտական կրթությունը և ուսուցումը պետք է ներդաշնակեցվի տնտեսության նոր պահանջներին համապատասխանեցնելու միջոցառումների ընդհանուր շրջանակների հետ: Դեռևս հստակ դիրքորոշում չի ձևավորվել առ այն, թե ուսուցման ինչպիսի կարիքներ պետք է բավարարեն կամ ինչպիսի հմտություններ պետք է ձեռք բերվեն, որպեսզի պատշաճ կերպով հասցեագրվեն տնտեսության կարիքները և առավելագույնի հասցվեն մասնագիտական հաստատությունների շրջանավարտներին և գործազուրկների հնարավորությունները աշխատանք գտնելու ուղղությամբ:

Հետագայում նույնպես հետևողական աշխատանքներ պետք է տարվեն սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացման ուղղությամբ:

Մարզում գործում են երեխաների ցերեկային խնամքի կենտրոններ, հասարակական կազմակերպությունների կողից իրականացվող ծրագրերի շրջանակներում, որոնք կրում են ժամանակավոր բնույթ:

Բնագավառում կարևորվում է պետական հովանավորչության հարցը, որպեսզի նշված կենտրոնների գործունեությունը չվտանգվի:

## 5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

### 5.1 Քաղաքականության վերլուծություն

ՀՀ Սյունիքի մարզում 2011թ. ՄՁԾ կարևորագույն նպատակներից է գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման և կատարելագործման միջոցով բուսաբուծական և անասնապահական մթերքների ծավալների ավելացումը, արտադրության արդյունավետության բարձրացումը, իրացման խնդիրների լուծումը, որի արդյունքում կավելանա գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կկրճատվի աղքատությունը գյուղական բնակավայրերում:

Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվող կարևոր միջոցառումների ընդհանուր գումարը 2011թ. կազմել է մոտ 1978.8 մլն դրամ, որտեղ ներդրումներ են նախատեսված ինչպես պետական բյուջեի, այնպես էլ միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների միջոցներով:

2011թ. միջոցառումները հիմնականում ուղղվել են ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների կերարտադրության, արհեստական սերմնավորման, կաթնարտադրության խթանման, հացահատիկային կուլտուրաների սերմարտադրության, սորտաթարմացման բնագավառներին անասնապահության և դաշտավարության զարգացման ծրագրերում աջակցելու գործընթացներին:

2011թ ՀՀ պետական բյուջեի, միջազգային կազմակերպությունների և ֆինանսական այլ աղբյուրների միջոցով իրականացվել են գյուղատնտեսության աջակցության որոշակի ծրագրեր.

- 2011թ ընթացքում Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից մարզում իրականացրել են Ծավ և Վարդանիձոր համայնքների ջրամատակարարման ծրագրեր 12.67 մլն դրամի գումարով:

- Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ, <<Շեն>> ԲՀԿ-ի միջոցով 2010թ. հաստատվել և 2011թ. շարունակվում է իրականացվել <<Շուկաներ Մեղրիի համար>> ծրագիրը: 2011թ. ընթացքում ներդրումների չափը կազմել է շուրջ 88.5 մլն դրամ: Անասնապահությամբ մասնագիտացված Սյունիքի մարզում իրացման շուկայի մատչելիությանը և արտադրողի շահերի պաշտպանությանն ուղղված քայլ կարող է լինել 2011թ գյուղական համայնքներում կաթի հավաքման և նախնական վերամշակման կետերի և փոքր սպանդանոցների հիմնումը, որն արդեն քննարկվել է Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության տարածաշրջանային գրասենյակների և <<Աշտարակ կաթ>> կազմակերպության հետ:

- <<Բազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ կողմից 2011թ. մարզում <<Անասնապահության զարգացման ծրագիր Սյունիքի մարզում>> նախագծի շրջանակներում իրականացվել է 5 միջոցառում՝ 202.0 մլն դրամ գումարով:

- ՄԱԿ-ի զարգացման ծրագրով Սյունիքի մարզում բրուցելոզ հիվանդության դեմ պայքարի փորձնական ծրագրի շրջանակներում իրականացվել է խոշոր և մանր եղջերավոր անասունների՝ համապատասխանաբար 1130 և 32481 պատվաստումներ:

- Պետական բյուջեով ոռոգման համակարգում վերակառուցման նպատակով կատարվել է 180.1 մլն դրամի չափով ներդրում:
- Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Իշխանասար համայնքի ջրարբիացման համակարգի վերանորոգում» ծրագրի շնորհիվ /բարեգործական/ ընդհանուր ներդրումային գումարը կազմել է 996.4 հազ.դրամ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Սիսիան-Գորիս մայրուղուն հարակից հատվածում կառուցված գյուղմթերքների մթերման կետի բարեկարգում» ծրագրի շնորհիվ /բարեգործական/ ընդհանուր ներդրումային գումարը կազմել է 1534.6 հազ.դրամ:
- 2011թ. «Կապանի տարածաշրջանի ֆերմերների ասոցացիա» ՀԿ-ը Կապանի տարածաշրջանի 19 համայնքներում իրականացրել է 4 ծրագիր, որի ընդհանուր գումարը կազմել է 12581.6 հազ. դրամ:
- 2011թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա 1128 տրակտորներից գարնան գյուղատնտեսական աշխատանքներին պատրաստ էին 851-ը, 175 հացահատիկահավաք կոմբայններից՝ 147-ը, 22 կերահավաք կոմբայններից՝ 22-ը:
- Մարզում կարևորում է նաև հացահատիկի սերմարտադրության, սերմաթարմացման և սորտափորձարկմանն ուղղված միջոցառումները, որոնց ուղղությամբ աշխատանքներ տարվում են:
- 2011թ. ՀՀ կառավարության կողմից Ճապոնիայի կառավարության դրամաշնորհով Հայաստանի Հանրապետությանը տրամադրված տրակտորներից երեքը՝ իրենց համապատասխան գործիքներով հատկացվել է մարզին:
- 2011թ. Շինուհայրի համայնքում հիմնվել է մրգի հավաքման և մթերման կետ:

## 5.2 Իրականացման առաջընթացը

Պետական բյուջեի շրջանակներում կատարվել է 49562 գլուխ խոշոր, 72306 գլուխ մանր եղջերավոր անասունների, 23721 գլուխ խոզերի, 31900 փեթակ մեղուների հակահամաճարակների դեմ պատվաստումներ:

Մարզ է ներկրվել հացահատիկի 4 նոր սորտեր, սորտափորձարկման նպատակով:

Մարզում զգալիորեն բարելավվել են խորհրդատվական աշխատանքները: Տարբեր դոնորների հետ ֆինանսական աջակցությամբ ուսուցումներ և խորհրդատվական աշխատանքներ են կազմակերպվել մարզպետարանի, ԳԱՄԿ-ի, ՓՄՁ-ԶԱԿ-ի և հասարակական այլ կազմակերպությունների կողմից:

Այդ աշխատանքները կշարունակվեն տարվա ընթացքում:



Աղյուսակ 5 Գյուղատնտեսության ոլորտի արդյունքային ցուցանիշները.

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ /տարեկան պլան/	Փաստացի տարեկան արդյունքը
Արդյունք 1. Մարզի հողային և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործում	1.1 Օգտագործվող վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի մակերեսը 1.2 Չօգտագործվող վարելահողերի տարածքը 1.3 Ոռոգելի մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսը 1.4 Գյուղատնտեսության ոլորտում զբաղված աշխատուժի տեսակարար կշիռը	226800հա  6100 հա 6308 հա  24 %	226635 հա  6100 հա 6308 հա  24 %
Արդյունք 2. Ոռոգման համակարգի բարելավում	2.1 Ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը 2.2 Մարզում վերականգնված ոռոգման ցանցերի ընդհանուր երկարությունը՝ 2.3 ԶՕԸ-երին ոռոգման աշխատանքների կազմակերպման համար ՀՀ պետբյուջեից հատկացումների չափը	3308հա  410կմ  171.5 մլն դրամ	3308հա  410կմ  180.1 մլն դրամ
Արդյունք 3. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացում, որակի բարելավում և հիվանդությունների կանխում	3.1 Կաթի արտադրության ծավալները 3.2 Մսի արտադրության ծավալները 3.3 Կաթի իրացման ծավալները 3.4 Մսի իրացման ծավալները 3.5 Բրդի իրացման ծավալները	37.3 հազ տ  11.6 հազ տ 28.6 հազ. տ  4.2 տ 66 տ	58.3 հազ տ  10.1 հազ տ 43.5 հազ. տ  5.2 տ 69.9 տ

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

	3.6 Ձվի իրացման ծավալները, 3.7 Արհեստականորեն սերմնավորված խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը 3.8 Համաճարակների դեմ պատվաստված անասնագլխա-քանակը	18.4 մլն հատ  1440 գլուխ  49562 գլուխ	28.1 մլն հատ  1600 գլուխ  49562 գլուխ
Արդյունք 4. Գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավում	4.1 Մեծածախ առևտրում ընդգրկված ֆերմերների քանակը 4.2 Սառնարանների տարողունակությունը, 50տ. և 236 խոր.մ /ընդամենը՝ 3 սառնարան/ 4.3 Գործարկված կաթի ընդունման և նախնական վերամշակման կետերի տարողունակությունը, 328տոննա, /ընդամենը՝ 28 կաթի կետ/ 4.4 Փոքր սպանդանոցների տարողունակությունը, 150խոր.մ /ընդամենը՝ 1 արտոնագրված սպանդանոց/ 4.5 Ոռոգվող հողերի մակերեսը 6623հա 4.6 Հիմնանորոգված անասնաբուժական լաբորատորիաների թիվը	245 ֆերմեր  50տ -236խոր.մ  450 տոննա  28 կաթի կետ  150 խոր.մ  6623 հա  2	245 ֆերմեր  50տ -236խոր.մ  450 տոննա  28կաթի կետ  150 խոր.մ  6623 հա  2

### **5.3 Խնդիրները**

Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքում առաջացած ամենամեծ խոչընդոտը տարվա ընթացքում միջին ցուցանիշներից ավելի երկարատև տեղումների քանակություններն էին, որից զգալիորեն տուժեցին գյուղատնտեսական մշակաբույսերը:

Ոլորտում մարզի առաջնահերթ խնդիրներն են.

- 1) Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության ցածր մակարդակը

- 2) Մթերքների պահպանման առանձնահատկություններից ելնելով անհրաժեշտ է ունենալ ժամանակակից տեխնոլոգիաներով զինված նախնական և հիմնական վերամշակման արտադրամասեր:
- 3) Հացահատիկային մշակաբույսերի որակյալ և կոնդիկցիոն սերմերով ապահովվածությունը
- 4) Մարզում սպանդանոցի և համակցված կերերի արտադրամասերի հիմնումը
- 5) Մարզի 12 համայնքներում հակակարկտային համակարգերի տեղադրումը
- 6) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
- 7) Մարզում փոքր և միջին բիզնեսի աջակցության գործուն և արդյունավետ մեխանիզմների կիրառում մասնավորապես պետական կառույցների օրինակ ՓՄՁ ԶԱԳ-ի ավելի լայնածավալ աշխատանքը մարզերում
- 8) Պետական աջակցությամբ գյուղատնտեսական մթերքների իրացման գործընթացի ճիշտ կազմակերպումը դիտարկել որպես գյուղատնտեսության զարգացման կարևորագույն բաղադրիչ
- 9) Կարևոր է արոտներ տանող հանդամիջյան ճանապարհների բարեկարգումը, արոտների մակերեսային և հիմնական բարելավման աշխատանքների իրականացումը, ջրարբիացումը, էլեկտրաֆիկացումը
- 10) Անասնաբուժության ոլորտում աջակցել նաև անասունների արյունապարազիտային հիվանդությունների կանխարգելման ու բուժման միջոցառումների իրականացմանը
- 11) Խթանել օրգանական գյուղատնտեսության զարգացումը, նոր սորտերի և առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը:

#### **5.4 Քաղած դասերը և հետագա քայլերը**

2011թ. պետք է հետևողականորեն շարունակվեն վերոնշյալ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների կերարտադրության, արհեստական սերմնավորման, կաթնարտադրության խթանման, հացահատիկային կուլտուրաների սերմարտադրության, սորտաթարմացման բնագավառներին, անասնապահության և դաշտավարության զարգացմանն աջակցելու գործընթացները:

**6. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**6.1 Քաղաքականության վերլուծություն**

Մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները լուծելու նպատակով նախատեսվել է աշխատանքներ տանել հետևյալ ոլորտներում՝

- 1) Անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարում
- 2) Կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման խնդիրների կառավարում
- 3) Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում
- 4) Հողերի դեգրադացիայի կանխումը և անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցումը
- 5) Մարգագետինների և արոտավայրերի բարելավում և արդյունավետ օգտագործում:

2009թ Մեղրու տարածաշրջանում հիմնադրվել է «Արևիկ» ազգային պարկը և «Զանգեզուր» արգելավայրը, որոնք զբաղեցնում են համապատասխանաբար 34401.8 հա և 17368.77 հա տարածք, որոնց կայացման գործընթացը շարունակվել է 2011 թվականին:

2011 թվականի ընթացքում որոշակի աշխատանքներ են տարվել մարզում գործող աղբավայրերի բարեկարգման և նորերի ստեղծման ուղղությամբ: Մարզի 6 քաղաքային համայնքներում մշակվել է աղբավայրերի պլան: Աղբահանությունը պատշաճ կազմակերպելու համար համայնքների տարածքում կահավորված են համապատասխան աղբատեղեր և տարբեր չափերի մոտ 700-800 մետաղյա աղբարկղներ: Բազմահարկ շենքերում գործում են 60 աղբատար խողովակներ: Գործում են միջհամայնքային աղբահեռացման 6 կազմակերպություններ, որոնք գործունեություն են ծավալում համաձայն կնքված պայմանագրերի:

Հայաստանի հետ Գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում Գերմանական KFW բանկի, ՀՀ բնապահպանության նախարարության հետ կնքված համաձայնագրի համաձայն սկսվել է Շիկահողի կենսոլորտային արգելոցի և շրջակա համայնքերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը՝ 8.25 մլն եվրո ընդհանուր գումարով: Նշված ծրագրից 2011թ. 31450.0 հազ դրամի աշխատանքներ է իրականացվել:

**6.2 Իրականացման առաջընթացը**

Աղյուսակ 6 Բնապահպանության ոլորտի արդյունքային ցուցանիշները

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի տարեկան
	Մարգային կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների,	Մեղրիի տարածաշրջանում ստեղծված «Արևիկ» ազգային պարկի կարողությունների ամրապնդում, հակահրդեհային	4.3հա տնկում	4.3հա տնկում

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

1	հասարակական կազմակերպությունների, ԲՊՏ Սյունիքի տարածքային բաժնի համագործակցության համար ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծում	ճանապարհների վերանորոգում  Համայնքները մասնակցություն տարածքների պլանավորման, կառավարման աշխատանքներին  /12 համայնքներ ներգրավված են այդ աշխատանքներում/	9.5կմ  12 համայնք	9.5կմ  12 համայնք
2	ԱՊ տարածքում իրականացվող շինարարության և ծրագրերի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, ՀԿ-երի միջոցով հանրային լուսմաների կազմակերպում	Համայնքային 5 կազմակերպությունների մասնակցություն ԱՊ տարածքում իրականացվող աշխատանքներին  Հ/Կ -ների ակտիվ գործունեություն  Մարզի 4 համայնքներում ՀԿ-ների կողմից հանրային լուսմաների կազմակերպում	5 կազմ.  4 ՀԿ  19 հանրային լուսմաներ	5 կազմ.  4 ՀԿ  19 հանրային լուսմաներ
3	Անտառների կառավարման բարելավում	Հիմնադրված անտառի մակերեսը,  Ստեղծման փուլում է գտնվում Կապանի տարածաշրջանում մեկ տնկարանային տնտեսություն  /տարեկան արտադրվում է 149520տնկի/  Մարզի անտառտնտեսություններում նոր անտառների տնկում, անտառլրացման, անտառվերականգնման և նախորդ տարիներին հիմնված անտառի լրացման աշխատանքների կատարում  Անտառամիջյան ճանապարհների բարեկարգում	10հա  149520տն կի  23հա տնկում  18հա լրացում  8,5կմ կառուցում  7,5կմ բարեկարգում	10հա  52000տնկ ի  23հա տնկում  18հա լրացում  8,5կմ կառուցվել է  7,5կմ բարեկարգվել է
4	Ագարակի, Ողջի և Նորաշենի կ գետերի վերահսկողության կազմակերպում	Նշված գետերի ջրի լաբորատոր ստուգում: Այդ նպատակով կեղտաջրերի հեռացման ցանցի բարելավում	37 նմուշ	37 նմուշ
5	Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում	Ինչո՞ր բնակավայրերի աղբավայրերի կառավարման պլանների կազմում	6	6

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՋԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի տարեկան
1	Մարզային կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, ԲՊՏ Սյունիքի տարածքային բաժնի համագործակցության համար ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծում	Մեղրիի տարածաշրջանում ստեղծված «Արևիկ» ազգային պարկի կարողությունների ամրապնդում  Համայնքները մասնակցություն տարածքների պլանավորման, կառավարման աշխատանքներին  /12 համայնքներ ներգրավված են այդ աշխատանքներում/	12 համայնք	12 համայնք
2	ԱՊ տարածքում իրականացվող շինարարության և ծրագրերի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, ՀԿ-երի միջոցով հանրային լուսմաների կազմակերպում	Համայնքային 5 կազմակերպությունների մասնակցություն ԱՊ տարածքում իրականացվող աշխատանքներին  Հ/Կ -ների ակտիվ գործունեություն  Մարզի 4 համայնքներում ՀԿ-ների կողմից հանրային լուսմաների կազմակերպում	5 կազմ.  4 ՀԿ  14 հանրային լուսմաներ	5 կազմ.  4 ՀԿ  14 հանրային լուսմաներ
3	Անտառների կառավարման բարելավում	Հիմնադրված անտառի մակերեսը,  Ստեղծման փուլում է գտնվում Կապանի տարածաշրջանում մեկ տնկարանային տնտեսություն  /տարեկան արտադրվում է 149520տնկի/  Մարզի անտառտնտեսություններում նոր անտառների տնկում, անտառլրացման, անտառվերականգնման և նախորդ տարիներին հիմնված անտառի լրացման աշխատանքների կատարում  Անտառամիջյան ճանապարհների բարեկարգում	10հա  149520տն կի  15հա տնկում  10հա լրացում  8,5կմ կառուցում  7,5կմ բարեկարգում	10հա  52000տնկ ի  15հա տնկում  10հա լրացում  8,5կմ կառուցվել է  7,5կմ բարեկարգվել է
4	Ագարակի, Ողջի և Նորաշենի գետերի վերահսկողության	Նշված գետերի ջրի լաբորատոր ստուգում: Այդ նպատակով կեղտաջրերի հեռացման ցանցի	27 նմուշ	27 նմուշ

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

	կազմակերպում	բարելավում		
5	Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում	Խոշոր բնակավայրերի աղբավայրերի կառավարման պլանների կազմում	6	6

**6.3 Խնդիրները**

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները մեծ չափով առկա են նաև Սյունիքի մարզում: Դրանք են՝ անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման խնդիրները, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, օգտագործումը, հողերի դեգրադացիայի կանխումը, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցումը, մարգագետինների բարելավումը և արդյունավետ օգտագործումը:

**6.4 Քաղաժ դասերը և հետագա քայլերը**

Անտառներով համեմատաբար հարուստ Սյունիքը գտնվում է որոշակի հակասական վիճակում՝ մի կողմից առկա են հարուստ և գեղատեսիլ անտառներ, իսկ մյուս կողմից՝ հանքային պաշարներով՝ մետաղներով, քարերով հարուստ ընդերքը հանքարդյունահանվում է, որը սոցիալ-տնտեսական դրական հետևանքների հետ մեկտեղ մարզում առաջացրել է բնապահպանական բազում խնդիրներ:

Գործող հանքարդյունաբերությանը զուգահեռ իրականացվում է նաև հանքային պաշարների հետազոտություն և գնահատում, որը կարող է մարզի տարածքում փոխել հանքարդյունաբերության աշխարհագրությունը: Հանքարդյունաբերության տեղաշարժը, կլուծի բազմաթիվ ռազմավարական հարցեր, բայց էկոլոգիայի տեսանկյունից լուրջ մտահոգությունների պատճառ է, քանի որ՝ որքան շատանան հանքավայրերը, այնքան կմեծանա շրջակա միջավայրի աղտոտվածությունը, կվտանգվի անտառների ճակատագիրը:

Կարևոր է համայնքների, հասարակության լայն շերտերի մասնակցությունը բնապահպանության հարցերում: Այստեղ համայնքների, հասարակության և պետության փոխհամաձայնեցված, ներդաշնակ գործունեությունը կարող է ապահովվել միայն տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության լայն խավերի, հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավման միջոցով: Օրենսդրական բավարար բազա կա /ՀՀ Սահմանադրություն, ՀՀ միջազգային պայմանագրեր, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ՀՀ օրենսգրքեր և այլն/, հասարակությանը նույնպես այս գործընթացներում ներգրավելու համար և այդ ներգրավվածությունը որոշակի չափով առկա է, սակայն այն բավարար համարել չի կարելի, քանզի ակնկալվում է ավելի մեծ մասնակցություն այս խնդիրներին: Ինչ-որ տեղ

հասարակության անբավարար մասնակցությունն այստեղ հենց մարդկանց մի սովոր հատվածի կրավորական դիրքորոշման արդյունք է:

2011 թվականի ընթացքում հասարակական լուսմներ են կազմակերպվել Շահումյանի հանքի շահագործման, Կապանի կոմբինատի արտադրական ծավալների ընդլայնման հետ կապված խնդիրների վերաբերյալ, իսկ 2011թ. դեկտեմբերի 1-ին Կապանի բնապահպանական հասարակական կենտրոնում տեղի է ունեցել քննարկում Քաջարան գյուղի բնապահպանական և սոցիալական խնդիրների հետ կապված:



## 7. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

### 7.1 Քաղաքաշինություն

#### 7.1.1 Քաղաքականության վերլուծություն

2011 թվականին քաղաքաշինության բնագավառի հիմնախնդիրները կապված էին մարզի ուսումնական և նախադպրոցական հաստատությունների, մշակութային և առողջապահական օբյեկտների կառուցման ու հիմնանորոգման, ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգման ու ջրամատակարարման գործի բարելավման, բնակարանային ֆոնդի հիմնանորոգման ու պահպանման, մարզի համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության վերահսկողության ապահովման, զոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հետ:

#### 7.1.2 Իրականացման առաջընթացը

##### **Բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ**

Մարդկային աղքատության հետ առնչվող հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սյունիքի մարզի մարդկային աղքատության հաղթահարման գերակայություններն առնչվում են նաև բնակչության բնակարանային ապահովման հետ:

«Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն» կազմակերպության կողմից "Սոցիալական տուն՝ աջակից պայմաններով" ծրագրի շրջանակներում Գորիս քաղաքում սկսվել է 20 բնակարանոց սոցիալական երկրորդ տան շինարարությունը և տարվա ընթացքում կատարվել 79.57 մլն դրամի շինարարական աշխատանք, որի համար որպես համաներդրում՝ 65 մլն դրամ է հատկացվել նաև ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

Շարունակվել են նաև զոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները: 2011 թվականին համապատասխան ընթացք է տրվել Կապանի, Սիսիանի և Քաջարանի քաղաքային ու Կոռնիձորի և Տաթևի գյուղական համայնքների կողմից բնակարանային պայմանների բարելավման նպատակով հաշվառման վերցրված 7 ընտանիքների անձնական գործերին:

Մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների իրականացման նպատակով ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 3-ի N 108-Ն և 2011թ. սեպտեմբերի 29-ի N 1436-Ն որոշումներով ընդհանուր առմամբ Սյունիքի մարզպետարանին հատկացվել է 1.44 մլրդ դրամ, որի սահմաններում մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել են 1.92 մլրդ դրամի հիմնանորոգման աշխատանքներ: Հիմնանորոգվել և վերանորոգվել են Կապան քաղաքի 9 բազմաբնակարան շենքերի տանիքները (46,68 մլն դրամ), Կապանի թանգարանի

շենքը (91,639 մլն դրամ), Մեղրու մշակույթի տան տանիքը (39,108 մլն դրամ), Խնձորեսկ գյուղի խմելու ջրի ներքին ցանցը (34,13 մլն դրամ), Գորիսի քաղաքի Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոցի շենքը (26,407 մլն դրամ), Աճանան գյուղի դպրոցի տանիքն ու կոյուղագիծը (20,837 մլն դրամ), Կապանի N 4 մանկապարտեզի շենքը (11,628 մլն դրամ), Սիսիանի N 3 մանկապարտեզի շենքը (2,914 մլն դրամ), Սառնակունք գյուղի հանդիսությունների տունը (605,9 հազ դրամ), «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքը (3,285 մլն դրամ), Գորիսի N 2 և N 5 դպրոցները (համապատասխանաբար 13,086 և 20,319 մլն դրամ), Գորիսի մանկավարժական քոլեջի սանհանգույցները (3,063 մլն դրամ): Ուժեղացման և ամրացման աշխատանքներ են սկսվել Սիսիան քաղաքի Ֆիզկուլտուրնիկների փողոցի N 2 բազմաբնակարան շենքի վթարային վիճակում գտնվող 4-րդ մուտքում (3,791 մլն դրամ): Սանիտարական մաքրման և բարեկարգման են ենթարկվել Սիսիան քաղաքի ջրային հայելիները (53,785 մլն դրամ), ասֆալտապատվել և բարեկարգվել են Կապանի Ռ. Մինասյան (101,689 մլն դրամ) և Գ. Արզումանյան (118,713 մլն դրամ) փողոցները, Գորիսի Խորենացի (73,232 մլն դրամ) փողոցն ու «Ավանգարդ» թաղամասը (123,238 մլն.դրամ), Սիսիանի Հովնան Որոտնեցի և Կամո փողոցները (համապատասխանաբար 67,739 և 29,198 մլն դրամ), Ագարակ քաղաքի Ե. Չարենցի փողոցը (77,226 մլն դրամ), Մեղրու թիվ 1 բնակելի թաղամասը (18,431 մլն դրամ): Ուժեղացման և ընդլայնման աշխատանքներ են կատարվել Մ2-Մեղրի մտնող կամրջի վրա (18,611 մլն դրամ): 3.95 մլն դրամով համապատասխան շենք է գնվել Իշխանասարի գյուղապետարանին որպես վարչական շենք տրամադրելու համար: Կառուցվող և հիմնանորոգվող օբյեկտների համար ընդհանուր առմամբ պատվիրվել և կազմվել են նախագծանախահաշվային փստաթղթեր, որոնց արժեքը կազմել է մոտ 24.0 մլն դրամ:

ՀՀ քաղաքաշինության նախարարության միջոցով ՀՀ պետբյուջեով նախատեսված միջոցների հաշվին շարունակվել է Անգեղակոթի միջնակարգ դպրոցի հիմնանորոգումը, որտեղ տարվա ընթացքում կատարվել է 127.576 մլն դրամի շինարարական աշխատանք: Միաժամանակ սկսվել են վեց նոր օբյեկտների կառուցման կամ հիմնանորոգման աշխատանքները: Տեղ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի շինարարությունում անցած մեկ տարվա ընթացքում կատարվել է 56.503 մլն դրամի, Կապանի թիվ 2 ավագ դպրոցի շինարարությունում՝ 108.669 մլն դրամի աշխատանք: Սիսիանի ավագ դպրոցի հիմնանորոգման գծով կատարվել է 133.814 մլն դրամի, Կապանի թիվ 9 դպրոցի վերանորոգման գծով՝ 45.702 մլն դրամի, Գորիսի Ա. Բակունցի անվան տուն թանգարանի հիմնանորոգման գծով՝ 26.115 մլն դրամի, Գորիսի Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հիմնանորոգման և ջեռուցման համակարգի վերականգնման գծով՝ 16.134 մլն դրամի աշխատանք:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով շարունակվել և 2011 թվականին ավարտվել է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկական մասնաշենքի հիմնանորոգումը, որտեղ տարվա ընթացքում կատարվել է 90.385 մլն դրամի աշխատանք:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցների հաշվին իրականացվել են 341.345 մլն դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ: Իրականացվել են Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի ցանկապատի կառուցման և բարեկարգման (10,911 մլն դրամ), Գորիսի թատրոնի ջեռուցման համակարգի

վերակառուցման (10,126 մլն դրամ), Քարաշենի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման և տարածքի բարեկարգման (23,45 մլն դրամ), Կորնիձոր համայնքի կենտրոնի շենքի ջեռուցման համակարգի կառուցման և տարածքի բարեկարգման (1,206 մլն դրամ), Անգեղակոթ համայնքի կենտրոնի շենքի հիմնանորոգման (53,703 մլն դրամ), Խնձորեսկի մշակույթի կենտրոնի շենքի հիմնանորոգման (33,97 մլն դրամ), Խնածախի դպրոցի հիմնանորոգման (88,0 մլն դրամ), Գեղանուշի միջնակարգ դպրոցի սպորտդահլիճի վերանորոգման (13,346 մլն դրամ), Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոցի սպորտդահլիճի վերանորոգման և տանիքի վերակառուցման (46,93 մլն դրամ) և Բնունիսի հիմնական դպրոցի շինարարության (59,704 մլն դրամ) աշխատանքները:

Մարզի ազգաբնակչության համար սոցիալական կարևոր ծրագրեր են իրականացվել նաև «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» և Ֆրանսիայի <<Երկիր և մշակույթ>> միջազգային բարեգործական կազմակերպությունների, ռուսաց լեզվի աջակցման հայ-ռուսական բարեգործական հիմնադրամի, «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ-ի, «ԼԵՌ-ԷՔՍ» ՓԲԸ-ի, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի, «Քաջարան» «Գորիս» և «Մեղրի-Ագարակ» հիմնադրամների, ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի և «Կապան-Գլենդել» միության կողմից:

Ընդհանուր առմամբ մարզի 33 համայնքներում պետական պատվերից դուրս, այլ կազմակերպությունների ընդգրկմամբ, իրականացվել են 84 ծրագրեր, որի արդյունքում լուծում են ստացել սոցիալական բնույթի և բնակչության կենսաապահովման հետ կապված մի շարք հիմնահարցեր /դպրոցների և մանկապարտեզների, խմելու և ոռոգման ջրագծերի, առողջապահական հիմնարկների, ակումբների ու կենցաղի տների վերանորոգում, խաղահրապարակների և հանգստյան գոտիների կառուցում և այլն/:

2011 թվականին վերոհիշյալ ծրագրերի գծով կատարվել է ավելի քան 331.43 մլն դրամ ընդհանուր գումարի չափով կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ:

### Դատաիրավական բարեփոխումներ

«Դատաիրավական բարեփոխումներ» ԾԻԳ-ի միջոցներով սկսվել են Կապանի դատարանի շենքի կառուցումը, որտեղ 2011թ. ընթացքում կատարվել է 85,0 մլն. դրամի շինարարական աշխատանք:

Աղյուսակ 7 Մարզում 2011 թվականին իրականացված շինարարական աշխատանքների վերաբերյալ

N/N	Ծրագրի անվանումը	Պայմանագրային գինը (հազ. դրամ)	Կատարողական (հազ. դրամ)
1	2	3	4
	<b>Պատվիրատու՝ ՀՀ Սյունիքի մարզպետարան</b>		

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՋՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

	ք. Կապանի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	48970.9	46680.02
1	ք. Կապանի թանգարանի շենքի վերանորոգում	91639.0	91639.0
2	ք. Մեղրու մշակույթի տան տանիքի վերանորոգում	39112.927	39107.859
3	ք. Կապանի Ռ. Մինասյան փողոցի ասֆալտապատում	101689.043	101689.036
4	ք. Գորիսի Խորենացու փողոցի ասֆալտապատում և բարեկարգում	73232.0	73232.0
5	ք. Գորիսի <Ավանգարդ> թաղամասի բարեկարգում	123238.345	123238.345
6	ք. Ագարակի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	77226.0	77226.0
7	ք. Սիսիանի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	96937.0	96937.0
8	ք. Սիսիանի ջրային հայելիների սանիտարական մաքրում և բարեկարգում	53785.131	53785.014
9	գ. Խնձորեսկի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	34130.14	34129.7
10	ք. Գորիսի Սաթյանի անվան երաժշտական դպրոցի վերանորոգում	26407.0	26407.0
11	գ. Աճանանի դպրոցի տանիքի հիմնանորոգում	20837.0	20837.0
12	Նախագծահետազոտական աշխատանքներ	15020.0	15020.0
13	ք. Կապանի թ 4 մանկապարտեզի վերանորոգում	11628.25	11628.25
14	ք. Մեղրու թ 1 բնակելի թաղամասի փողոցի վերանորոգում	18430.591	18430.591
15	ք. Կապանի Գ. Արզումանյան փողոցի վերանորոգում	118713.1	118713.116
16	Մ2- Մեղրի մտնող կամրջի ուժեղացում-ընդլայնում	18610.521	18610.521
17	ք. Սիսիանի թ3 մանկապարտեզի վերանորոգում	2914.022	2914.022
18	գ.Սառնակունքի հանդիսությունների տան վերանորոգում	605.93	605.93
19	<Սիսիանի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի վերանորոգում	3284.8	3284.847
20	ք.Գորիսի թ 2 դպրոցի վերանորոգում	13086.2	13086.224
21	ք.Գորիսի թ 5 դպրոցի վերանորոգում	20319.3	20319.3
22	ք.Գորիսի մանկավարժական քոլեջի սանհանգույցների նորոգում	3062.889	3062.889
23	ք.Սիսիանի Ֆիզկուլտուրնիկների փողոցի թիվ 2	3790.777	3790.777

**ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՋՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ**

	բազմաբնակարան շենքի վթարային 4-րդ մուտքի ուժեղացում և ամրացում		
24	Նախագծահետազոտական աշխատանքներ	8960.0	8960.0
25	Գործիսի սոցիալական տան կառուցման համաներդրման ապահովում (սուբվենցիա)	65000.0	65000.0
26	Իշխանասարի գյուղապետարանի վարչական շենքի գնում	3950.0	3950.0
	<b>Ընդամենը</b>	<b>1094580.953</b>	<b>1092284.441</b>
	<b>Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն</b>		
1	Անգեղակոթի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	127576.055	127576.055
2	Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	56503.000	56503.000
3	Կապանի թիվ 2 ավագ դպրոցի հիմնանորոգում	108668.620	108668.620
4	Սիսիանի ավագ դպրոցի հիմնանորոգում 1-ին փուլ	102691.644	102691.644
5	Սիսիանի ավագ դպրոցի հիմնանորոգում 2-րդ փուլ (հուլիս)	25093.823	25093.823
6	Սիսիանի ավագ դպրոցի հիմնանորոգում 3-րդ փուլ (հոկտեմբեր)	6028.670	6028.670
7	Գործիսի Ա. Բակունցի անվան տուն թանգարանի հիմնանորոգում	26115.00	26115.00
8	Գործիսի Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հիմնանորոգում և ջեռուցման համակարգի վերականգնում	16134.300	16134.30
9	Կապանի թիվ 9 դպրոցի վերանորոգում	45702.4	45702.40
	<b>Ընդամենը</b>	<b>514513.512</b>	<b>514513.512</b>
	<b>Պատվիրատու՝ &lt;Հայաստան&gt; համահայկական հիմնադրամ</b>		
1	<Կապանի ԲԿ> ՓԲԸ մանկական մասնաշենքի հիմնանորոգում	90385.1	90385.1
	<b>Ընդամենը</b>	<b>90385.1</b>	<b>90385.1</b>
	<b>Պատվիրատու՝ Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ (ՀՍՆՀ)</b>		
1	Գործիսի թիվ 4 ավագ դպրոցի ցանկապատի կառուցում և բարեկարգում	10910.856	10910.856
2	Գործիսի թատրոնի ջեռուցման համակարգի վերակառուցում	10126.155	10126.155
3	Քարաշենի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում, տարածքի բարեկարգում	23449.655	23449.655
4	Կոռնիձորի համայնքի կենտրոնի շենքի ջեռուցման համակարգի կառուցում, տարածքի բարեկարգում	1206.143	1206.143
5	Անգեղակոթի համայնքի կենտրոնի շենքի հիմնանորոգում	53703.4	53703.4
6	Խնձորեսկի մշակույթի կենտրոնի շենքի հիմնանորոգում	33969.61	33969.609
7	Խնածախի դպրոցի հիմնանորոգում	88000.0	88000.0
8	Գեղանուշի միջնակարգ դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում	13345.75	13345.75

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

9	Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում, տանիքի վերակառուցում	46929.606	46929.606
10	Բնունիսի հիմնական դպրոցի շենքի կառուցում	59704.357	59704.36
	<b>Ընդամենը</b>	<b>341345.488</b>	<b>341345.488</b>
	<b>Պատվիրատու՝ &lt;Ղատախրավական բարեփոխումների ծրագիր&gt;</b>		
	Կապանի դատարանի շենքի կառուցում	85000.0	85000.0
	<b>Ընդամենը</b>	<b>85000.0</b>	<b>85000.0</b>
	<b>Պատվիրատու՝ «Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն»</b>		
1	Գորիս քաղաքում սոցիալապես անապահով խավի համար 22 բնակարանոց շենքի կառուցում	79057.386	79057.386
	<b>Ընդամենը</b>	<b>79057.386</b>	<b>79057.386</b>
	<b>Պատվիրատու՝ բարեգործական այլ կազմակերպություններ</b>	<b>331430.0</b>	<b>331430.0</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ</b>	<b>2536312.439</b>	<b>2534015.927</b>

### 7.1.3 Խնդիրները

Մարզի տարածքում կատարվող քաղաքաշինական աշխատանքների կատարման համար առաջանում են որոշակի դժվարություններ և խնդիրներ, մասնավորապես շինարարական աշխատանքները ժամանակին և որակով սկսելու ու կատարելու համար խոչնդոտ է հանդիսանում ֆինանսական միջոցների ոչ ժամանակին հատկացումը:

### 7.1.4 Քաղաժ դասերը և հետագա քայլերը

Անհրաժեշտ է բարելավել բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների շինարարության և հիմնանորոգման, առողջապահական, մշակութային, մարզական օբյեկտների, բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացները:

## **8. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

### **8.1 Ճանապարհաշինություն**

#### **8.1.1 Քաղաքականության վերլուծություն**

Ճանապարհաշինության ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է առկա ճանապարհային ցանցի հիմնանորոգմանը, վերականգմանն ու պահպանմանը:

2011 թ. ՄԶԾ աշխատանքային պլանով նախատեսվել էր

ա/ միջպետական, հանրապետական և համայնքային նշանակության ճանապարհների նորոգում

բ/ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ

գ/ մարզային նշանակության ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ

Վերոնշյալ աշխատանքներն իրականացնելու համար հիմնանորոգման ժամանակ կատարվել են ինչպես փոսային նորոգում, այնպես էլ միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի կառուցման աշխատանքներ, իսկ վերանորոգման, և սպասարկման ժամանակ՝ նաև կոպճապատման և հողային հարթեցման աշխատանքներ

#### **8.1.2 Իրականացման առաջընթացը**

Ընդհանուր առմամբ տարբեր ֆինանսավորման աղբյուրներով 2011 թվականի ընթացքում մարզի ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից իրականացվել է 1.7 մլրդ դրամի աշխատանքներ, որից <<ԼԵՌ-ԷՔՍ>> ՍՊԸ-ի միջոցներով մարզում իրականացվել է 16.898 մլն դրամ ընդհանուր գումարի աշխատանքներ, իսկ ՀՀ պետբյուջեի միջոցներով՝ տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման, պահպանման ու շահագործման, ձմեռային պահպանության համար 1.67 մլրդ դրամ ընդհանուր գումարի աշխատանքներ:

ՀՀ պետբյուջեով տարբեր նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար իրականացվել է 878.194 մլն դրամ ընդհանուր գումարի աշխատանքներ, պետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար՝ 690.637 մլն դրամ, մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար՝ 105,239 մլն դրամ:

Ավարտվել է՝

- ք. Ագարակի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ 77.225 մլն դրամ ընդհանուր արժեքով:
- ք. Կապանի Ռ. Մինասյանի փողոցի ասֆալտապատման աշխատանքներ 118.587 (որից 16.8986 մլն դրամ ֆինանսավորումը <<ԼԵՌ-ԷՔՍ>> ՍՊԸ)

- ք. Գորիսի Ավանգարդ թաղամասի բարեկարգման աշխատանքներ 123.238 մլն դրամ ընդհանուր արժեքով
- ք. Մեղրի թիվ 1 բնակելի թաղամասի փողոցի վերանորոգման աշխատանքներ 18.341 մլն դրամ ընդհանուր արժեքով
- ք. Սիսիանի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման (Հ.Որոտնեցի փողոց) աշխատանքներ 67.738 մլն դրամ ընդհանուր արժեքով
- Մ-2-Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման առաձին սողանքային ճանապարհահատվածների վերականգման աշխատանքները՝ 146.766 մլն դրամ ընդհանուր արժեքով
- Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի Իսլամական հանրապետության սահման ա/ճ կմ281+800 հատվածում ներքին հենապատի վերանորոգման աշխատանքները՝ 36,943 մլն դրամ ընդհանուր արժեքով
- Ճանապարհների նշագծման աշխատանքները՝ 66.5 մլն դրամ ընդհանուր արժեքով

Շարունակվում է և 2012 թվականի ապրիլ ամսին ավարտին կհասցվի հետևյալ օբյեկտների հիմնանորոգման շինարարական աշխատանքներ՝

- ք. Կապանի Գ. Արզումանյան փողոցի վերանորոգման աշխատանքներ 201.365 մլն դրամ ընդհանուր արժեքով (2011թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել է 118.713 մլն դրամի վերանորոգման աշխատանքներ)
- ք. Գորիսի Խորենացու փողոցի ասֆալտապատման, բարեկարգման աշխատանքներ 118.663 մլն դրամ ընդհանուր արժեքով (2011թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել է 73.232 մլն դրամի վերանորոգման աշխատանքներ)
- ք. Սիսիանի Կամոյի փողոցի վերանորոգում աշխատանքներ 34.79 մլն դրամ ընդհանուր արժեքով (2011թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել է 29.198 մլն դրամի վերանորոգման աշխատանքներ)
- ք. Մեղրի, Մ-2-Մեղրի մտնող կամրջի ուժեղացում-ընդլայնում աշխատանքներ 36.293 մլն դրամ ընդհանուր արժեքով (նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել է 18.610 մլն դրամի վերանորոգման աշխատանքներ):

Հասարակական տրանսպորտի աշխատանքներն անվտանգ կազմակերպելու և բարելավելու նպատակով 22 ներմարզային երթուղիներից 2 երթուղիներում ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության համար կազմակերպվել և սահմանված կարգով անց են կացվել նոր մրցույթներ:

Աղյուսակ 8 Ճանապարհաշինության ոլորտի 2011թ. Ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ



ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՋԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

h/ h	Միջոցառման անվանումը	Հիմնանորոգման ենթակա ճանապարհներ			
		Նախատեսված տարեկան		Փաստացի տարեկան	
		գումար /մլն դրամ/	Երկարություն /կմ/	գումար /մլն դրամ/	Երկարություն /կմ/
1	Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների նորոգում	250.209	-	250.209	-
2	Համայնքային նշանակության ճանապարհների նորոգում	779.345		609.375	
3	Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում	36.294		18.611	
4	Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանություն	690.637	433,2 / 289,95*	521.5/ 169.137**	433,2 / 289,95*
5	Մարզային նշանակության ճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանություն	105.239	96.6 / 151.1*	72.3642 / 32.8748**	96.6/ 151.1*

\* Ծանոթություն - Աղյուսակում համարիչը ցույց է տալիս ընթացիկ պահպանության ապտոճանապարհի երկարությունը /ամառային սպասարկում/, իսկ հայտարարը ձմեռային պահպանության ապտոճանապարհի երկարությունը

\*\* Ծանոթություն - Աղյուսակում համարիչը ցույց է տալիս ընթացիկ պահպանության համար նախատեսված գումարը /ամառային սպասարկում/, իսկ հայտարարը ձմեռային պահպանության համար նախատեսված գումարը:

### 8.1.3 Խնդիրներ

Մարզի տարածքում կատարվող ճանապարհաշինարարական աշխատանքների կատարման ժամանակ առաջանում են որոշակի դժվարություններ և խնդիրներ՝ մասնավորապես կապված եղանակային անբարենպաստ պայմանների հետ:

#### **8.1.4 Քաղած դասերը և հետագա քայլերը**

Անհրաժեշտ է ապահովել տարվա բոլոր եղանակներին տրանսպորտային միջոցների հուսալի և անխափան երթևեկությունը, մարզային նշանակության ճանապարհների երկարակեցությունը, շահագործումը և պահպանումը, համայնքների և մարզկենտրոնի միջև մշտական տրանսպորտային կապը:

#### **8.2 Ջրամատակարարում և ջրահեռացում**

##### **8.2.1 Քաղաքականության վերլուծություն**

##### **8.2.1 Քաղաքականության վերլուծություն**

Այս ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որն ուղղակիորեն կնպաստի մարզի բնակչության աղքատության նվազեցմանը:

Ոլորտում անհրաժեշտ են զգալի ներդրումներ՝ ներառյալ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը:

ԿՁԾ-ն կարևորում է խմելու ջրի մատչելիության և հասանելիության, ինչպես նաև ջրի որակի խնդիրները, որոնք էապես ազդում են բնակչության կենսամակարդակի վրա: Մարզի 7 քաղաքային և 102 գյուղական համայնքներից միայն 6 քաղաքային (Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան, Մեղրի, Ագարակ) և 17 գյուղական (Սյունիք, Աճանան, Քարահունջ, Հարթաշեն, Շինուհայր, Խոտ, Հարժիս, Հալիձոր, Տեղ, Կոռնիձոր, Քարաշեն, Ույծ, Աշոտավան, Իշխանասար, Սպանդարյան, Կարճևան, Վարդանիձոր) համայնքներն են խմելու ջուրը ստանում կենտրոնացված ջրամատակարարման համակարգերից, որտեղ սահմանված կարգով կատարվում է ջրի վարակազերծում: Մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում:

##### **8.2.2 Իրականացման առաջընթացը**

Ասիական զարգացման բանկի միջոցներով 350,0 մլն դրամի աշխատանքներ են կատարվել Կապան քաղաքի ջրամատակարարման ցանցերի հիմնանորոգման, քաղաքի որոշ թաղամասերում ներքին նոր ցանցերի կառուցման ուղղությամբ: 200.0

մլն դրամի հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել նաև Մեղրիի տարածաշրջանում: Մասնավորապես հիմնանորոգվել է Ագարակի խմելու ջրի մաքրման կայանը, կառուցվել Կարճևան գյուղի խմելու ջրի ներքին նոր ցանցը: 180.3 մլն դրամով վարչական նոր շենքեր են կառուցվել Սիսիան և Ագարակ քաղաքներում:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված 35,0 մլն դրամի դիմաց 34.13 մլն դրամով հիմնանորոգվել է Խնձորեսկ գյուղի խմելու ջրի ներքին ցանցը:

Ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնանորոգման ուղղությամբ 32.555 մլն դրամի աշխատանք է կատարվել նաև «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Հարավային» տարածքային մասնաճյուղի կողմից, որից 6.37 մլն դրամի՝ Կապանի տարածաշրջանում, 7.508 մլն դրամի՝ Գորիսի տարածաշրջանում, 3.486 մլն դրամի՝ Սիսիանի տարածաշրջանում և 15.191 մլն դրամի՝ Մեղրիի տարածաշրջանում: Հիմնանորոգվել են 2903 գծամետր ջրամատակարարման և մոտ 500 գծամետր ջրահեռացման ցանցեր:

<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության միջոցներով ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Կապան, Գորիս, Սիսիան և Մեղրի քաղաքներում, Քարաշեն, Հալիձոր, Կարճևան, Բալաք, Սալվարդ և Եղվարդ գյուղերում:

### **8.2.3 Խնդիրները**

Մարզի համայնքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնական մասը ունեն 30-40 տարվա հնություն, խարխլված են և ենթակա են հիմնանորոգման: Պետբյուջեի և այլ ներդրողների սուղ միջոցները բավարար չեն հիմնախնդիրները կարգավորելու համար:

### **8.2.4 Քաղած դասերը և հետագա քայլերը**

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում:

Հետագա ծրագրերում պետք է հաշվի առնվեն մարզի զարգացման ծրագրով նախատեսված առաջնահերթությունները:

## **8.3 Գազամատակարարում**

### **8.3.1 Քաղաքականության վերլուծություն**

Գազիֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է:

Երկարատև ծմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Միաժամանակ գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում հնարավորություն կտա տնտեսել տարեկան շուրջ 10-12 խ.մ. վառելիքայտ, որն իր հերթին նշանակում է շրջակա միջավայրի էկոհամակարգի բարելավում:

Համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը:

### **8.3.2 Իրականացման առաջընթացը**

2011 թվականին շարունակվել են մարզի բնակավայրերի գազիֆիկացման ուղղությամբ տարվող աշխատանքները: Տարվա ընթացքում «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների թիվը ավելացվել է 386-ով, որից 289-ը բազմաբնակարան շենքերի բնակարաններ են, իսկ 97-ը՝ անհատական տներ: Տարեսկզբի 22966-ի դիմաց բաժանորդների թիվը տարեվերջին հասցվել է 23352-ի, կամ աճը կազմել է 1,02%, իսկ խորհրդային տարիների համեմատ այն աճել է 55,3%-ով: Գազիֆիկացվել է նաև 44 ձեռնարկություն: Անվտանգության ապահովման նպատակով բնակարաններում տեղադրվել է 1178 հատ անվտանգության ազդանշանիչ ինքնաշխատ համակարգ: 47 նման համակարգեր են տեղադրվել նաև ձեռնարկություններում: Ազդանշանիչ ինքնաշխատ համակարգերի ընդհանուր թիվը 2011 թվականի տարեվերջին կազմել է 22700: Ընթացքի մեջ են Մեղրի և Ագարակ քաղաքների ու Մեղրիի տարածաշրջանի 11 գյուղական համայնքների գազիֆիկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

### **8.3.3 Խնդիրները**

Չնայած բաժանորդների թիվը խորհրդային տարիների համեմատ աճել է շուրջ 55,3%-ով, մարզում գազիֆիկացումն իրականացվում է դանդաղ տեմպերով: Մարզի 135 բնակավայրերից գազիֆիկացված է ընդամենը 31 բնակավայր:

<<Հայրուսգազարդ>> ՓԲԸ-ի ներդրումները բավարար չեն ապահովելու նույնիսկ հիմնական գազատարին համեմատաբար մոտ գտնվող համայնքների գազիֆիկացման համար:

### **8.3.4 Քաղաժ դասերը և հետագա քայլերը**

Գազամատակարարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը: Անհրաժեշտ է գազիֆիկացման աշխատանքներ իրականացնել Մեղրի և Ագարակ քաղաքներում, ինչպես նաև գյուղական և հատկապես սահմանամերձ ու բարձր լեռնային բնակավայրերում, ինչի շնորհիվ կկանխվի բնակչության արտահոսքը և նպաստավոր սոցիալական պայմաններ կստեղծվեն գյուղերի հետագա զարգացման համար:

## **8. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

### **8.1 Տարածքային կառավարում**

#### **8.1.1 Քաղաքականության վերլուծություն**

Հայաստանի մարզերում ներդրված տարածքային կառավարման համակարգը գործում է արդյունավետությամբ, սակայն շարունակական կատարելագործման կարիք ունի: Դեռևս 2009 թվականից շրջանառության մեջ է ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը, որը ներկայացվել է մարզպետարաններին և որի վերաբերյալ Սյունիքի մարզպետարանի կողմից նույնպես ներկայացվել են առաջարկություններ:

ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1795 որոշմամբ հաստատված ՀՀ Սյունիքի մարզպետարանի կազմակերպական կառուցվածքը ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի N329-Ն որոշմամբ ենթարկվեց փոփոխությունների: Մարզպետարանի կառավարման նոր կազմակերպական կառուցվածքը հնարավորություն է տալիս հիմնականում լուծելու առկա հիմնախնդիրները և արդյունավետ կերպով իրականացնելու մարզպետի լիազորությունները: Ինչպես ենթադրվել էր՝ փոփոխությունների դինամիկան շարունակվեց (ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի N718-Ն որոշմամբ ընդլայնվեց մեկ բաժնի գործառույթների շրջանակը) և էլի կարող է շարունակվել, քանի որ համակարգն անընդհատ հարմարեցվում է ընթացող զարգացումներին:

Էլեկտրոնային կառավարման բնագավառում Սյունիքի մարզպետարանում առաջընթացը շոշափելի է: Այսպես՝ Հայաստանի տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման արդյունքում Սյունիքի մարզն ինտեգրացվում ներկայացված է պաշտոնական կայքով (2011 թվականի սեպտեմբերից, նախկին <http://syunik.region.am> կայքի փոխարեն գործում է նորաստեղծ և ավելի կատարելագործված <http://syunik.gov.am> կայքը): Mulberry համակարգը 2009 թվականի դեկտեմբերից վերջնականապես ներդրվել է մարզպետարանում և մարզպետարանի փաստաթղթաշարժի գերակշիռ մասն իրականացվում է այս համակարգով, առկա է տվյալների բավարար բազա, որը ճշգրտման, ինչպես նաև դրանից օգտվելու մեխանիզմների մշակման փուլում է:

#### **8.1.2 Իրականացման առաջընթացը**

Սյունիքի մարզում 2011 թվականին շարունակվել են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հիմքերի ամրապնդմանն ուղղված միջոցառումները:

Տարածքային կառավարման բնագավառում 2011 թվականին Սյունիքում իրագործվել

է հետևյալը.

- 1) Մարզպետին օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակներում ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացում, ոստիկանության և ազգային անվտանգության, պաշտպանության, կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ու այլ ոլորտներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգում:
- 2) Սյունիքի մարզպետարանի, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ պետական հատվածի փոխհարաբերությունների շարունակական կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- 3) Մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդաբանական օգնության, դրա տրամադրման մեխանիզմների հստակեցում և դրանց արդյունավետության բարձրացում:
- 4) Մարզային զարգացման գործընթացներում Սյունիքի մարզի խորհրդի դերը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ:
- 5) Մարզպետարանի աշխատակազմի կարողությունների որոշակի հզորացում:  
Հաշվետու ժամանակաշրջանում կրկին աճել է մարզպետարանի՝ համակարգիչներով և ժամանակակից կապի միջոցներով հագեցվածության մակարդակը: ՀՀ կառավարության կողմից Սյունիքի մարզպետարանին հատկացվել է 26 նոր համակարգիչ, 2 տպիչ/սկաներ:  
Ընթացել են մարզպետարանի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրման, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ու ատեստավորման շարունակական գործընթացները: Հաշվետու ժամանակաշրջանում վերապատրաստվել է 28, ատեստավորվել՝ 27 քաղաքացիական ծառայող:
- 6) Մարզպետարանի ֆունկցիոնալ գործունեության ապահովման տեսանկյունից կարևոր, ներքին փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպում և այդ գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների պարտադիր կիրառում:
- 7) Մարզպետարանի պաշտոնական տեղեկատվության շրջանառության՝ առավելագույն չափով էլեկտրոնային տարբերակով իրականացում: Հայաստանի տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման և դրա կատարելագործման արդյունքում Սյունիքի մարզն ինտերնետում ներկայացված է պաշտոնական կայքով: Դա հնարավորություն է տալիս հրապարակային դարձնել տարածքային կառավարման բնագավառում մարզպետի և մարզպետարանի գործունեությունը: ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի N40-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2009 թվականի գերակա խնդիրների ծրագրի համաձայն, 2009 թվականի դեկտեմբերին Սյունիքի մարզպետարանում ներդրվեց Mulberry

համակարգը, որը 2010 և 2011 թվականների արդյունքներով ապահովեց մարզպետարանի գործունեության զգալի արդյունավետություն: 2011 թվականին նույնպես, փաստաթղթաշարժի գերակշիռ մասն իրականացվել է հենց այս համակարգի միջոցով: Զգալիորեն կրճատվել է ավելորդ փաստաթղթաշարժը, բարձրացել աշխատանքի արդյունավետությունը: Չնայած դրան, համակարգը դեռևս կատարելագործման կարիք ունի: Անհրաժեշտ է՝ փաստաթղթերի փոխանակման ալգորիթմը դինամիկ կերպով կատարելագործել, ունենալ դասակարգված էլեկտրոնային պանակներ ստեղծելու, միատեսակ փաստաթղթերը դրանց մեջ պահելու, փաստաթղթերն արագ գտնելու և մի շարք այլ հնարավորություններ:

Բարձր տեխնոլոգիաների արդի արագընթաց զարգացումների ֆոնի վրա առաջացել է նաև մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում նույնպես այս համակարգը (կամ նմանատիպ համակարգեր) ներդնելու անհրաժեշտությունը: Եթե համակարգը ներդրվի տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների բոլոր տարածքային ստորաբաժանումներում, ապա զգալիորեն կբարձրանա այս մարմինների հետ աշխատելու արդյունավետությունը, համայնքների ղեկավարների աշխատակազմերում կփոխվի կադրերի որակական մակարդակը:

Մարզի 26 համայնքներում ներդրված են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր (ՀԿՏՀ), որոնցից 12-ի վերաբերյալ, հաշվետու ժամանակաշրջանում, ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի հանձնարարականի համաձայն, մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խումբը կատարել է ուսումնասիրություններ և ներկայացրել առաջարկություններ: 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ այս համակարգի միջոցով արդեն գործում են Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան և Ագարակ քաղաքային համայնքների պաշտոնական վեբ-կայքերը: Աշխատանքներ են տարվում ՀԿՏՀ ունեցող մյուս համայնքները նույնպես համացանցին միացնելու ուղղությամբ: 2012 թվականի հունվարից Գորիս, Քաջարան, Սիսիան և Ագարակ քաղաքային համայնքներն իրենց էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը Սյունիքի մարզպետարանի հետ կսկսեն իրականացնել փաստաթղթերի անմիջական առաքման եղանակով:

### **8.1.3 Խնդիրները**

Տարածքային կառավարման համակարգում ձևավորված մշակույթի առանձին տարրեր անհրաժեշտ է տարածել նաև տեղական ինքնակառավարման համակարգում: Առանց տեղական ինքնակառավարման համակարգի հետ սերտ համագործակցության հնարավոր չէ ապահովել երկու համակարգերի կառավարման արդյունավետությունը: Այս ենթատեքստում բարձր տեխնոլոգիաների արդի արագընթաց զարգացումների ֆոնի վրա առաջացել է նաև մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում նույնպես Mulberry համակարգը կամ նմանատիպ որևէ համակարգ ներդնելու անհրաժեշտությունը: Եթե այդպիսի համակարգ ներդրվի քաղաքապետարաններում ու գյուղապետարաններում, զգալիորեն կբարձրանա համայնքների հետ աշխատելու արդյունավետությունը,

համայնքների ղեկավարների աշխատակազմերում կփոխվի կադրերի որակական մակարդակը: Այս ուղղությամբ, ինչպես նշվեց նախորդ՝ «8.1.2 Իրականացման առաջընթացը» կետում, աշխատանքներ տարվում են և արդյունքներն աստիճանաբար շոշափելի են դառնում:

#### **8.1.4 Քաղած դասերը և հետագա քայլերը**

Կարելի է հետևություն անել, որ այսօր տարածքային կառավարման համակարգում շեշտադրումը հիմնականում պետք է լինի բնագավառի օրենսդրության կատարելագործման, համակարգի էլեկտրոնային կառավարման, մարզպետարանի տեխնիկական հագեցվածության մակարդակների բարձրացման, կադրերի որակավորման շարունակական բարձրացման վրա (պետական կառավարման համակարգում, ի տարբերություն մասնավոր առանձին ոլորտների, աշխատակիցների վարձատրության չափը համեմատաբար ցածր է և, բնականաբար, բարձր որակավորում ունեցող կադրերի առկայությունը համակարգում պակասելու միտում ունի, կադրերին ներկայացվող որակական բարձր պահանջները ենթադրում են նաև բարձր աշխատավարձի առկայություն, որն իր հերթին հակադարձ կերպով նպաստելու է ծառայողների որակավորման բարձրացմանը):

### **8.2 Տեղական ինքնակառավարում**

#### **8.2.1 Քաղաքականության վերլուծություն**

2011 թվականին նույնպես, մարզի 109 համայնքների կարողությունների շարունակական բարձրացման կարևորագույն գործոն հանդիսացավ համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման լիարժեք ապահովումը, որի իրականացման համար արդիական են մնում օրենսդրական փոփոխությունների կատարումը, հարկային վարչարարության մակարդակի և որակի բարձրացումը: Այս առումով անհրաժեշտ է բարձրացնել համայնքի ավագանու՝ որպես համայնքի ներկայացուցչական մարմնի դերը՝ համայնքի գույքի կառավարման, համայնքի ղեկավարի գործունեության վերահսկման մասով, հստակեցնել համայնքի ղեկավարին այս հարցում թերանալու համար պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները:

#### **8.2.2 Իրականացման առաջընթացը**

2011 թվականին մարզի համայնքներում շարունակվել է համայնքների կարողությունների շարունակական բարձրացման գործընթացը:

Շարունակվել է համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման լիարժեք ապահովմանը նպաստող քայլերի իրականացումը: Մարզի խորհրդի՝ հաշվետու ժամանակաշրջանում հրավիրված նիստերում քննարկվել և լսվել են մարզպետի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի, մարզպետի 2011 թվականի աշխատանքային ծրագրի, սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանն առնչվող



խնդիրների, ինչպես նաև գյուղատնտեսության, առողջապահության, կրթության և այլ բնագավառների ու ոլորտների մասին հարցեր: Մարզպետարանի կայքում տեղադրվել է մարզի խորհրդի անցկացված նիստերի մասին տեղեկատվությունը:

Լսվել և քննարկվել են նաև համայնքների ու հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի, մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության, համայնքներում իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում, ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2011 թվականի փետրվարի 14-ի N20-Ա հրամանի համաձայն, Սյունիքի մարզի 20 համայնքներում վարչական հսկողություն է իրականացվել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ: Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված թերություններն ու բացթողումները շտկվել են, օրենքով սահմանված գործառույթների իրականացումը համապատասխանեցվել է ՀՀ օրենսդրության պահանջներին: Կատարված աշխատանքների վերևաբերյալ եռամսյակային հաղորդումներ են ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Համայնքների ղեկավարների աշխատակազմերում աշխատանքային հարաբերությունների ձևավորման սահմանված կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել: ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից 2011 թվականի սեպտեմբերի ամսվա ընթացքում Սյունիքի մարզի Շինուհայրի, Վերիշենի, Անգեղակոթի, Շաքիի, Քարահունջի, Հալիձորի, Կարճևանի և Վարդանիձորի գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, առկա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ և անհրաժեշտ պարզաբանումներ ներկայացնելու նպատակով այդ համայնքներում կատարվել են ուսումնասիրություններ: Ի կատարումն նշված համայնքներում հայտնաբերված թերությունների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N°01/17/6174-11 հանձնարարականի, թերություններն ու բացթողումները վերացնելու և նմանօրինակ դեպքերը մարզի մյուս համայնքներում բացառելու նպատակով, նշված 8 համայնքներից բացի, ուսումնասիրությունների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի համայնքային ծառայության հարցերի վարչության պետի զեկուցագիրը ներկայացվել է նաև մարզի մյուս բոլոր քաղաքային ու գյուղական համայնքներին (այս առումով ստացվել է որոշակի արդյունք՝ մի շարք համայնքների ղեկավարների աշխատակազմեր, որոնք ունեին նմանատիպ թերություններ, տեղեկանալով զեկուցագրում նշված թերությունների մասին, իրենց մոտ դրանք արդեն վերացրել են): Հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը համայնքների ղեկավարների աշխատակազմերին ցուցաբերել է մեթոդական ու խորհրդատվական օգնություն (Կապանի տարածաշրջանի համայնքներում թերությունները բացառելու նպատակով տարածաշրջանի համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների հետ անց է կացվել նաև մեկ սեմինար):

Միաժամանակ իրավական հսկողություն է իրականացվել համայնքներից ստացված ավագանիների որոշումների նկատմամբ: Ապահովվել են ոչ իրավաչափ որոշումների նկատմամբ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77<sup>5</sup> հոդվածով սահմանված ընթացակարգերը: Դրանց արդյունքում ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները վերանայվել և համապատասխանացվել են օրենքի պահանջներին, դատական կարգով դրանք գանգատարկելու անհրաժեշտություն չի եղել:

ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակներում Մարզպետը 2011 թվականին ապահովել է մարզի 19 համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների նախապատրաստման ու անցկացման աշխատանքները: Կազմակերպական օժանդակություն է ցույց տրվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին ու համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման՝ օրենքով սահմանված ընթացակարգերի ամբողջական իրականացումն, ինչպես նաև դրանց հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ: Համայնքների ղեկավարներին տեղեկացվել է 2011 թվականի հունիսի 26-ից ուժի մեջ մտած ՀՀ նոր ընտրական օրենսգրքի ընդունման և դրա առանձին դրույթների կիրառման վերաբերյալ:

Մեթոդական օժանդակություն է ցուցաբերվել նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց լիազորությունների ստանձնման ու գործունեության կազմակերպման հարցերում:

Մարզպետարանը, սահմանված կարգով, իր իրավասությունների շրջանակներում լուծում է տվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարձրացված հարցերին, համապատասխան առաջարկություններ և միջնորդություններ ներկայացրել ՀՀ կառավարություն և ՀՀ նախարարություններ:

Համագործակցելով համայնքային ծառայության ոլորտի պետական լիազոր մարմնի հետ համակարգված աշխատանքներ են տարվել համայնքների ղեկավարների աշխատակազմերում համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի ամբողջական իրականացումն ապահովելու ուղղությամբ:

Մարզպետարանի՝ ըստ տարածաշրջանների, համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների հետ պարբերաբար անցկացվող աշխատանքային խորհրդակցությունների ընթացքում քննարկվել են համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության, թափուր պաշտոնների համալրման, մրցույթների և ատեստավորման գործընթացների կազմակերպման, համայնքային ծառայողների անձնական գործերի վարման և համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մյուս գործառույթների պատշաճ կատարման հարցերը: Ապահովվել է մարզի համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների շտեմարանների փոփոխված տվյալների՝ սահմանված ժամկետներում հավաքագրումը և դրանց պարբերաբար ներկայացումը ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

2012թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է համայնքային ծառայության 399 պաշտոն: Թափուր պաշտոնների համալրման համար հայտարարվել է 43,

կայացել է 37 մրցույթ: Թափուր պաշտոնների համալրման գործընթացը շարունակվելու է 2012 թվականին՝ համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով: Աշխատանքներ են տարվել համայնքային ծառայողների վերապատրաստումն իրականացնելու ուղղությամբ: Հաշվետու տարվա ընթացքում վերապատրաստվել է 39 համայնքային ծառայող: Մարզպետարանն ապահովել է համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը, կազմվել և սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների ժամանակացույցերը: Մարզպետարանը 2011 թվականին աշխատանքներ է տարել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բարելավման ուղղությամբ: Համայնքների ղեկավարների և աշխատակազմերի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով պարբերաբար նրանց հետ, ըստ տարածաշրջանների, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնագետների կողմից անց են կացվել խորհրդատվական բնույթի սեմինար-պարապմունքներ:

Համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման նպատակով համայնքներում կազմվել են գործավարության մատյաններ, համապատասխան շենքային պայմանների առկայության դեպքում առանձնացվել են ավագանու անդամների աշխատասենյակներ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ անհրաժեշտ աշխատանքային տարածքներ:

Մարզի համայնքներում հանրային իրազեկման գործընթացն արդյունավետ և օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու նպատակով ձեռնարկվել են միջոցներ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության ապահովման, ինչպես նաև համայնքներում հանրային իրազեկման գործընթացի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ:

Մարզպետարանի կայքում հրապարակվել են համայնքների ղեկավարների 2010 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, տեղադրվել համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումները: Համայնքներում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի պահանջների համաձայն տեղեկատվական վահանակների միջոցով ապահովվել է տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի հրապարակումը: Մշտական հսկողություն է իրականացվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման նպատմամբ և սահմանված պարբերականությամբ արդյունքները ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2009 թվականի հունվարի 26-ի N05-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների գրանցամատյանի վարման կարգի համաձայն, ապահովվել է Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարների կողմից համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայողների, այդ թվում՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն

գրադեցնող, ինչպես նաև պաշտոնից ազատված անձանց վերաբերյալ գրանցամատյանները (Ձև1, Ձև2) սահմանված ժամկետներում և պատշաճ լրացված վիճակում ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը տրամադրումը: Համայնքների ղեկավարների աշխատակազմերին այս հարցում ցույց է տրվել մեթոդական ու խորհրդատվական օգնություն և առաջարկվել է սահմանված կարգով լրացնել գրանցամատյանները, պարբերաբար թարմացնել դրանցում առկա տվյալները և փոփոխությունների դեպքում ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

